

**Ե.Լ. Դավթյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ  
1920-2014թթ.**

Գիրքը տպագրվել է Հայաստանի բասկետբոլի  
ֆեդերացիայի աջակցությամբ

«Լիմուշ» հրատարակչություն  
Երևան 2014

ՀՏԴ 796.323(479.25)(091)

ԳՄԴ 75.566

Դ 234

Հրատարակությանն է երաշխավորել ՀՀ բասկետբոլի ֆեդերացիայի  
նախագահությունը  
Գրախոսներ՝ Գ. Ղազարյան՝ Մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ  
Վ.Զաքոյան՝ մանկ.գիտ.թեկնածու, պրոֆեսոր

Դավթյան Ե. Լ.

Դ 234 Հայաստանի բասկետբոլի պատմությունը 1920-  
2014թթ/ Ե. Լ. Դավթյան.- Եր.: Լիմուշ, 2014.- 90 էջ:

Գրքի հեղինակը ներկայացնում է Հայաստանի բասկետբոլի պատմությունը ըստ տարիների սկսած 1920թ-2014թթ-ից: Աշխատանքում նկարագրված է մեր անվանի մարզիկների, մարզիչների, բասկետբոլ մարզաձևի տարբեր ոլորտներում աշխատող մարդկանց մասին տեղեկություններ,ինչպես նաև հայազգի տարբեր մարդկանց մասին, որոնք խաղացել կամ աշխատել են այլ երկրներում:Հետաքրքիր վիճակագրական տվյալներ են ներկայացված հայաստանցի բասկետբոլիստների մասնակցության մասին ԽՍՀՄ տարբեր առաջնություններին և սպարտակիստներին: Տեխնիկություններ է տրվում ,ինչպես Հայաստանում բասկետբոլի ծագման սկզբնաղբյուրների այնպես էլ ժամանակակից բասկետբոլի մասին:Աշխատանքում օգտագործվել է հարյուրիսունից ավել նկարներ:

Աշխատանքը կարող է օգտակար լինել բասկետբոլի մարզիչներին, մարզիկներին, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսանողների , ինչպես նաև բասկետբոլ մարզաձևը սիրող մարդկանց համար:

ՀՏԴ 796.323(479.25)(091)

ԳՄԴ 75.566

ISBN 978-9939-64-198-0

© Ե. Դավթյան, 2014

## Նախաբան

Աշխատանքի նպատակն է վեր հանել Հայաստանի՝ շատերի կողմից արդեն մոռացված բասկետբոլի անցյալն ու ներկան, որի պատմությունը սկսվում է 1920-ական թվականներից:

Մենք փորձել ենք մեկ աշխատության մեջ ամփոփել տարբեր տարիներին Հայաստանի բասկետբոլի հավաքական թիմերում ու ակումբներում աշխատած մարզիչների, մարզիկների, մրցավարների, ֆեդերացիաների նախագահների և այլ մարդկանց կատարած աշխատանքների մասին տեղեկությունները:

Աշխատանքը գրելիս օգտվել ենք գրական աղբյուրներից, տարբեր մարդկանց, այդ թվում՝ հեղինակի անձնական պահոցներից՝ փորձելով ըստ տարիների ներկայացնել հայկական բասկետբոլի պատմությունը:

Անդրադարձել ենք այն մարդկանց ու կազմակերպություններին, որոնք մեծ ներդրում են ունեցել և այժմ էլ ունեն Հայաստանում բասկետբոլի զարգացման գործում: Ինչ խոսք, անհնար կլիներ այս փոքր գրքում ընդգրկել նրանց բոլորին, սակայն հուսով ենք, որ մեր աշխատանքը կլինի շարունակական, և մասնագետների օգնությամբ հետագայում կկարողանանք ավելացնել նաև այն նվիրյալներին, որոնց անունները բացակայում են:

Գիրքը հատկապես ուսանելի է երիտասարդների համար, ովքեր կարող են ծանոթանալ այս մարզաձևի ակունքներին, տեղեկություններ ստանալ հայկական բասկետբոլի երախտավորների ու նրանց թողած մեծ ժառանգության մասին, ծանոթանալ նրանց փորձին:

Չիմանալով մեր պատմությունը՝ մենք չենք կարող ճիշտ կառուցել մեր ներկան և չենք կարող ճիշտ քայլեր կատարել հետագա մեր աշխատանքներում հաջողությունների հասնելու համար:

Այս համեստ աշխատանքը երախտիքի խոսք է մեր ՄԵԾԵՐԻՆ, ովքեր ամեն ինչ արել են Հայաստանի բասկետբոլի զարգացման ու պահպանման համար:

Այս գիրքը նվիրում ենք նրանց:

Շնորհակալություն ենք հայտնում այն մարդկանց, ովքեր օժանդակեցին գրքի ստեղծմանն ու հրատարակմանը:

Հատուկ շնորհակալություն Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի նախագահ Հ. Ռոստոմյանին՝ գրքի ստեղծման և հրատարակման աշխատանքներին աջակցելու համար:

## Բասկետբոլի ծագումը և զարգացումը Հայաստանում

1915-1920թթ. Հայաստանի ամերիկյան որբանոցներում աշխատող օտարերկրյա դաստիարակներն ու զինվորականներն իրենց ազատ ժամերին բասկետբոլ էին խաղում, որի հանդիսականներն էին լեհ-նականցի մեծ թվով պատանիներ և երիտասարդներ, որոնք էլ հետագայում տարվեցին այս մարզաձևով:

Հայաստանում բասկետբոլի ծննդյան տարին 1925 թվականն է, և այդ գործում մեծ ներդրում են ունեցել Մ. Մամիկոնյանը և Ա.Ալանակյանը:

Բասկետբոլի կանոններն առաջին անգամ հայերեն լեզվով հրատարակվել են 1922 թվականին՝ Կոստանդնուպոլսում:



**Մամիկոնյան Մուշեղ Մանուկի.** ծնվել է 1904թ.

սեպտեմբերի 15-ին Խաթու գյուղում (Արևմտյան Հայաստան՝ Մշո գավառ, ներկայումս՝ Թուրքիա):

Վախճանվել է 1990թ. մայիսի 25-ին Երևանում:

1948թ. ավարտելով Ֆիզիկական կուլտուրայի

հայկական պետական ինստիտուտը՝ Մ. Մամի-

կոնյանը մինչև կյանքի վերջը ղեկավարել է նույն

ինստիտուտի դահուկային սպորտի, ապա՝ մարզախաղերի ամբիոնը: Նա ֆիզիկական կուլտուրայի տեսության և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ էր: Մ. Մամիկոնյանին 1961թ. շնորհվել է հանրապետության վաստակավոր մարզիչի, իսկ 1967թ.՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի կոչում:



Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի Մարզիչ՝  
**Արամ Ալանակյան,** 1932թ. վաստակավոր գործիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ

1925-26թթ. Գյումրիի «Խորարծան» (խորհրդային առևտրի ծառայողների) և Երևանի «26-կոմիսարների» անվան այգում կառուցվեցին առաջին բասկետբոլային բաց խաղահրապարակները:

1925թ. Լենինականում կազմավորվեց բասկետբոլի կանանց առաջին թիմը: Այդ տարիներին թիմեր ստեղծվեցին նաև Երևանում, Կիրովականում և Դիլիջանում:

1927թ. Բաքվում Հայաստանի կանանց բասկետբոլի թիմն առաջին անգամ մասնակցեց Անդրկովկասյան հանրապետությունների բասկետբոլի մրցաշարին:



*Լենինականի «Կառուցող» մարզական միության բասկետբոլի թիմը, 1932թ.: Մարզիչ՝ Ա. Ավանակյան*

1928թ. Լենինականի «Խորարձառ» բասկետբոլի կանանց թիմը դարձավ «Անդրերկաթուղային» առաջնության չեմպիոնը:

1929թ. Երևանի Ն. Կրուպսկայայի անվան դպրոցի պատանի բասկետբոլիստները մասնակցեցին Մոսկվայում կազմակերպված մրցաշարին և, հաղթելով Կիևի, Լենինգրադի, Դաղստանի թիմերին, եզրափակիչում միայն պարտվեցին Մոսկվայի թիմին ու գրավեցին երկրորդ մրցանակային տեղը (մարզիչ՝ Մ. Մամիկոնյան):



*Երևանի դպրոցականների տոն: Բասկետբոլի մրցաշար, որին մասնակցեցին Լենինականի, Լոռու և Երևանի բասկետբոլի թիմերը, 1930թ.*

1933թ. նոյեմբերին համահայաստանյան 2-րդ սպարտակիադայում ընդգրկվում է նաև բասկետբոլ մարզաձևը:

1937թ. անցկացվում է ԽՍՀՄ 7-րդ առաջնությունը, որին մասնակցում է Լենինականի «Լոկոմոտիվ» կանանց թիմը:

Ակսած 1934թ. մինչև 1940թ. հանրապետության լավագույնը համարվում էր «Ստրոխտել» մարզական ակումբի աղջիկների թիմը: 1939թ. նրանք դարձան իրենց ընկերության համամիութենական մրցումների հաղթող:

1939թ. Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների միջև անցկացվեց բասկետբոլի առաջնություն, որին մասնակցում էին ուսանողական բոլոր թիմերը: Այս մրցաշարում առաջին տեղը զբաղեցրեց Պոլիտեխնիկական ինստիտուտի թիմը:

1943թ. Երևանում անցկացվեց Անդրկովկասյան առաջին սպարտակիական, որտեղ Հայաստանի կանանց և տղամարդկանց թիմերը գրավեցին 3-րդ տեղը:

1946-47թթ. հանրապետությունը ներկայացնում էին տղամարդկանց (Երևան) և կանանց (Լենինական) թիմերը: Այդ տարիներին կանանց առաջատար խաղացողներից էին Թորոսյան քույրերը, Ն. Հովհաննիսյանը, Ն. Հանեսօղյանը և ուրիշները:

Պատերազմից հետո՝ 1946-ին, Լենինականի քաղաքային ֆուտբոլի դաշտին կից կառուցված բաց խաղահրապարակում պատերազմի վետերան բասկետբոլիստների և երիտասարդների միջև ցուցադրական խաղ անցկացվեց: Վետերանների թիմում հանդես էին գալիս ճանաչված բասկետբոլիստներ Արամ Ալանսկյանը, Արամ Մարտիրոսյանը (Սոլախ), Վարդան Սարգսյանը: Խաղի բազմաթիվ երիտասարդ հանդիսականները շուտով մարզումներ սկսեցին Լենինականի տարբեր ակումբներում:

1947թ. հանրապետության չեմպիոն դարձան Կիրովականի տղամարդկանց և կանանց «Դինամո» թիմերը:

1947թ. Տաշքենդում մասնակցելով ԽՍՀՄ 3-րդ խմբի առաջնությանը՝ Հայաստանի տղամարդկանց և կանանց թիմերը զբաղեցրին առաջին տեղը և իրավունք ստացան հաջորդ տարի հանդես գալու


ԽՍՀՄ բասկետբոլի տղամարդկանց և կանանց առաջնության 2-րդ խմբում:

1948թ. հունիսի 18-ին Երևանում անցկացվեց բասկետբոլի առաջնություն: 1-ին տեղը զբաղեցրին Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի մարզական ակումբի (ՖԻՄԱ) տղամարդկանց և կանանց թիմերը:

1948թ. հոկտեմբերի 10-13-ը Երևանում անցկացվեց Անդրկովկասյան ավանդական 4-րդ սպարտակիադան: Հայաստանի տղամարդկանց և կանանց թիմերն այս մրցույթում գրավեցին 2-րդ տեղը:

1949թ. Երևանում տղամարդկանց 10 և կանանց 8 թիմերի միջև անցկացվեց հանրապետության գավաթի մրցում: Առաջին տեղերը գրավեցին ՖԻՄԱ-ի թիմերը:

1950թ. Լենինականում անցկացվեց բասկետբոլի հանրապետության առաջնությունը, որտեղ առաջին տեղը զբաղեցրին ՖԻՄԱ-ի տղամարդկանց և կանանց թիմերը: Տղամարդկանց առաջնությանը մասնակցեցին Երևանի ՖԻՄԱ-ի, Երևանի «Մեդիկ», Երևանի «Դինամո», Լենինականի «Դինամո» և Կիրովականի «Դինամո» թիմերը:



«Սպարտակ» մարզական ընկերության առաջնությունը, Կազան, 1949 թ.: Աջից ծախ՝ Դավիթ Դավթյան (մարզիչ և թիմապետ), Մովսես Ղևոնդյան, Միրիջան Քեչիշյան, Նուբար Բուզարյան, Հարություն Դավթյան, Վահրամ Դոլաբջյան, Հովհաննես Սակարյան, Պեդրոս Արնաուտյան, Զավեն Դոլաբջյան:



Վսեսոյուժնոե քերբեւեժտեճո ու ճաճկեթեճու  
 Д.С.О. Спортсмен" 1949г. г.Казань.  
 Հայաստանի «Սպարտակ» բասկեթբոլի թիմի հավաքականը, 1948թ.: Ձախից  
 աջ՝ Մովսես Ղևոնդյան, Միրիջան Քեչիշյան, Նուբար Բուլգարյան, Վահրամ  
 Դոլաբջյան, Հարություն Դավթյան, Դավիթ Դավթյան, Պետրոս Արնաուտյան,  
 Զավեն Դոլաբջյան, Հրաչիկ Ազարյան՝ ներկայացուցիչ-մարզիչ:



Երևանի առաջնությունը, 26.04.1947թ.



Դրվագ Երևանում անցկացված գավաթի մրցումներից, 1949թ.



ՖԻՄԱ-ի տղամարդկանց թիմը 1950թ-ից մասնակցեց միութենական մրցումներին: Առաջին հնգյակում հանդես էին գալիս սփյուռքահայեր Թոմ-Թադևոս Մուրադյանը (ԱՄՆ), Ժան Մակարյանը (Ֆրանսիա), Աբրահամ Համամջյանը, Ժիրայր Մինասյանը, Արմենակ Ալաջաջյանը՝ երեքն էլ Եգիպտոսից: Իրենց խաղով աջքի էին ընկնում նաև երևանցի Ռ. Մարգարյանը և լենինականցի Կ. Մանուկյանը:



Երևանի ՖԻՄԱ-ն, 1950թ.: Ձախից աջ՝ Կոնստանտին Վարդանյան (մարզիչ), Օլեգ Մուրադյան, Սուրեն Ղազարյան, Աբրահամ Համամջյան, Սպարտակ Ծառուկյան, Ժիրայր Մինասյան, Ժան Մակարյան, Ալեքսանդր Սարգսյան, Արմենակ Ալաջաջյան, Հրանտր Սիմոնյան (նկարում բացակայում է Թոմ Մուրադյանը)



ԽՍՀՄ առաջնություն, Խարկով, 17.09.1949թ.



ՖԻՄԱ-ի կանանց թիմը, Լենինական, 16.07.1950թ. Մարզիչ՝ Կ. Վարդանյան



Հայաստանի տղամարդկանց թիմը Վիլնյուսում, 4 սեպտեմբերի, 1950թ.: Մարզիչներ՝ կանգնածներից աջից երկրորդը՝ Կ. Վարդանյան և երրորդը՝ Ա. Օգանով, խաղացողներ՝ Ա. Ալաջաջյան, Օ. Մուրադյան, Հ. Սիմոնյան, Ժ. Մինասյան, Ժ. Մակարյան, Ա. Համամջյան, Թ. Մանուկյան, Ա. Ծառուկյան, Ս. Սիմոնյան, Ա. Վարժապետյան

1950թ. օգոստոսի 6-8-ը Լենինականում կայացավ Ախուրյանի հովտի 1-ին սպարտակիադան, որին մասնակցեցին Լենինականի, Ախուրյանի, Արթիկի և Սպիտակի թիմերը:



*ԽՍՀՄ առաջնություն, «Բոլշևիկ» մարզադաշտ, Օդեսա, 1951թ.: Երևանի «Իսկրա» տղամարդկանց թիմը. Ա. Ալաջաջյան, Ա. Համամջյան, Ժ. Մակարյան, Ս. Ծառուկյան, Թ. Մուրադյան և ուրիշներ*



*ԽՍՀՄ առաջնություն, Վիլնյուս, 1950թ.: Դրվագ Տարտուի «Համալսարան» և ՖԻՄԱ-ի հանդիպումից*

1950-ից միութենական մրցումներին մասնակցեց ՖԻՄԱ-ի կանանց թիմը, որի կազմում խաղում էին Ջեմմա Ամյանը, Ֆենյա Սաղաթելյանը և ուրիշներ:

1951թ. օգոստոսին Երևանում անցկացվեց հանրապետական առաջնություն, որտեղ «Իսկրա» մարզական ակումբի տղամարդկանց և կանանց թիմերը զբաղեցրին առաջին տեղը:

1951թ. ՖԻՄԱ-ի կազմը համալրեցին Կ. Մանուկյանը (Լենինական) և Կոլյա Կարապետյանը (Թբիլիսի):

1952թ. ՖԻՄԱ-ի կազմը համալրեցին Ռաֆիկ Մարգարյանը, Գուրգեն Չարչոլյանը, Արմեն Վարժապետյանը, Պարույր Մխիթարյանը:

1952թ. մայիսի 22-25-ը Կիրովականում անցկացվեց գավաթի հանրապետական մրցումներ, որտեղ հաղթող ճանաչվեց Կիրովականի թիմը: Նույն տարվա սեպտեմբերին Երևանում անցկացվեց ԽՍՀՄ հերթական առաջնությունը, որին մասնակցում էին ՀԽՍՀ կանանց և տղամարդկանց թիմերը: Տղամարդիկ զբաղեցրին 8-րդ, իսկ կանայք՝

14-րդ տեղը: Մրցումներն անցկացվեցին 26 կոմիսարների անվան այգում, որտեղ իր փայլուն խաղով աչքի ընկավ Ա. Ավաջաջանը: Հետագայում ընդգրկվելով ԽՍՀՄ հավաքականի կազմում՝ նա դարձավ ինչպես Տոկիոյի օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր, այնպես էլ՝ Եվրոպայի քառակի չեմպիոն:



**Արմենակ Ավաջաջան.** ծնվել է 1930թ. դեկտեմբերի 25-ին Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

1947թ. ներգաղթել է Հայաստան: 1951թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: 1949-53թթ. հանդես է եկել Երևանի ՖԻՄԱ-ի կազմում: Հայաստանի բազմակի չեմպիոն է, 1953-66թթ.՝ ԽՍՀՄ հավաքականի անդամ: 1954-57թթ. հանդես է եկել Ալմա

Աթայի «Բուրեվեստնիկ»-ի կազմում: 1959թ. Մոսկվայի հավաքականի կազմում դարձել է ԽՍՀՄ ժողովուրդների 2-րդ սպարտակիադայի չեմպիոն, իսկ 1959-61թթ.՝ ԽՍՀՄ չեմպիոն Մոսկվայի ԲԿՄԱ-ի կազմում, 1961թ.՝ Եվրոպայի չեմպիոն ԽՍՀՄ-ի կազմում, 1961-62թթ.՝ ԽՍՀՄ-ի չեմպիոն ԲԿՄԱ-ի կազմում: ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ է:

1963թ. ԽՍՀՄ ժողովուրդների 3-րդ սպարտակիադայի չեմպիոն Մոսկվայի թիմի կազմում և Եվրոպայի չեմպիոն ԽՍՀՄ-ի հավաքականի կազմում: 1964թ. ԽՍՀՄ չեմպիոն և Տոկիոյի օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր ԽՍՀՄ-ի հավաքականի կազմում: 1965թ. ԽՍՀՄ չեմպիոն ԲԿՄԱ-ի կազմում և Եվրոպայի չեմպիոն ԽՍՀՄ-ի հավաքականի կազմում: 1966թ. ԽՍՀՄ չեմպիոն ԲԿՄԱ-ի կազմում:



*ՀԽՍՀ կանանց առաջին սպարտակիադայի չեմպիոն Երևանի ՖԻՄԱ-ի թիմը, 1953թ.*

1967թ. ԽՍՀՄ ժողովուրդների 4-րդ սպարտակիադայի 3-րդ մրցանակակիր Մոսկվայի հավաքականի կազմում: 1969-70թթ. ԲԿՄԱ-ի ավագ մարզիչն էր: 1969թ. թիմը դառնում է ԽՍՀՄ չեմպիոն:



*Ա. Համամջյանը  
և Թ. Մուրադյանը  
հանդիպման  
ժամանակ*

1953թ. մայիսի 22-24-ը Երևանում անցկացվեց կանանց առաջին սպարտակիադան, որտեղ ՖԻՄԱ-ի կանանց թիմը գրավեց առաջին տեղը:

1953թ. Լենինականում անցկացվեց Լենինականի, Կիրովականի և Երևանի առաջնություն, որտեղ առաջին տեղը զբաղեցրեց Երևանի թիմը:

1953թ. օգոստոսին Դնեպրոպետրովսկում անցկացվեց համամիութենական պատանեկան առաջնություն: Հայաստանը գրավեց 12-րդ տեղը:

1953թ. նոյեմբերին անցկացվեց ուսանողական առաջնություն տղամարդկանց և կանանց միջև:

1948թ. տեղի ունեցավ սփյուռքահայ բասկետբոլիստներ Աբրահամ Համամջյանի և Թոմ Մուրադյանի առաջին հանդիպումը: Երկար տարիներ խաղալով նույն թիմում՝ նրանք Հայաստանի հավաքականի առաջատար մարզիկներն էին: 1960թ. Թ. Մուրադյանը մշտական բնակության մեկնեց ԱՄՆ: Տարիներ անց ԱՄՆ տեղափոխվեց նաև Ա. Համամջյանը, և 48 տարի անց երկու ընկերները կրկին հանդիպեցին:



*Երևանի ՖԻՄԱ-ն, 1952թ.: Ձախից աջ՝ Արմենակ Ալաջաջյան, Ժան Մակարյան, Ռաֆիկ Մարգարյան, Կառլեն Մանուկյան, Աբրահամ Համամջյան*



*Երևանի ՖԻՄԱ-ն, 1953թ.: Ձախից աջ՝ Արմենակ Ալաջաջյան, Ժան Մակարյան, Պարույր Մխիթարյան, Սպարտակ Ծառուկյան, Ռաֆիկ Մարգարյան, Թոմ Մուրադյան, Աբրահամ Համամջյան, Կառլեն Մանուկյան, Արմեն Վարժապետյան*




Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի բասկետբոլի թիմը, 1952-54թթ.: Ձախից աջ՝ Արմեն Վարժապետյան, Սերգեյ Ջախարյան, Վլադիմիր Ղազարյան, Մելս Հարությունյան, Ալիկ Ներսեսյան, Գառնիկ (մարզիչ), Մարկ Գուրով (ֆիզիկական դաստիարակության ամբիոնի վարիչ): Աջից ձախ՝ Ավետիս Ավետյան, Արթուր Թարխանյան, Ժիրիկ Մկրտչյան, Արամ Նազարյան

1953թ. նոյեմբերին անցկացվեց տղամարդկանց և կանանց թիմերի ուսանողական առաջնություն: Տղամարդկանց առաջնությունում առաջին տեղը գրավեցին Պոլիտեխնիկական ինստիտուտի, իսկ կանանց առաջնությունում՝ Ռուսական մանկավարժական ինստիտուտի թիմերը:



1953թ. Երևանի տղամարդկանց թիմը հանդիպեց Ղազախստանից ժամանած տղամարդկանց բասկետբոլի թիմի հետ: Մեջտեղում կանգնածը Ղազախստանի ներկայացուցիչ Վասիլի Ախտանն է, որի հասակը 234սմ էր: Նկարում աջից առաջինը կանգնած է Թոմ Մուրադյանը, Ախտանի աջ և ձախ կողմերում Արմենակ Ալաջաջյանն ու Աբրահամ Համամջյանն են, մեջտեղում նստած է Ժան Մակարյանը



**Աբրահամ Համամջյան.** Ծնվել է 1931թ. նոյեմբերի 24-ին Պորտ-Սայիդում (Եգիպտոս): 1947թ. ընտանիքով ներգաղթել է Հայաստան: 1949թ. հանդես է եկել Երևանի ՖԻՄԱ-ի և Հայաստանի հավաքականի կազմերում: 1952թ. Ա. Համամջյանը մասնակցել է Երևանում անցկացված ԽՍՀՄ առաջնությանը և զբաղեցրել 8-րդ տեղը: 1953թ. ավարտել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը:

Երկար տարիներ մարզել է Երևանի «Աշխատանք» բասկետբոլի տղա-

մարդկանց թիմը, որի կազմում հանդես են եկել Հայաստանի հավաքականի մի շարք խաղացողներ: Այդ տարիներին Ա. Համամջյանը մարզել է նաև «Բուրեվեստնիկ» բասկետբոլի կանանց թիմը: Որպես Հայաստանի կանանց հավաքականի գլխավոր մարզիչ նա մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների 2-րդ սպարտակիադային: Ա. Համամջյանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզիչի կոչում, ինչպես նաև հանրապետական և համամիութենական կարգի մրցավարի կոչում:



**Կառլեն Ղևոնդի Մանուկյան.** ծնվել է 1933թ. օգոստոսի 14-ին Գյումրիում: Մահացել է 2013թ. նոյեմբերի 30-ին Երևանում: 1954թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Հայաստանի անվանի բասկետբոլիստ, մարզիչ և մանկավարժ: Խաղացել է Երևանի ՖԻՄԱ-ի, Կիևի «ԲԿՄԱ» և «Ստրոհտել» թիմերում: Մասնակցել է ԽՍՀՄ ժողովրդների սպարտակիադաներին՝ 1956թ. Հայաստանի հավաքականի, իսկ 1963թ.՝ Ուկրաինայի հավաքականի կազմում: 1954-ից աշխատել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզախաղերի ամբիոնում, որպես դասախոս, դոցենտ, պրոֆեսոր, ամբիոնի վարիչ, 1980թ.՝ մանկավարժական ֆակուլտետի դեկան: ԽՍՀՄ սպորտի պատվավոր վարպետ (1959), 1956-ից մարզել է Հայաստանի բասկետբոլի կանանց, իսկ հետագայում՝ տղամարդկանց հավաքականները:

1954թ. ԽՍՀՄ «Բ» խմբի առաջնություն Հայաստանի կանանց թիմը գրավում է 1-ին տեղը՝ իրավունք ստանալով մասնակցելու ԽՍՀՄ «Ա» խմբի մրցաշարին:



*Դրվագ Հայաստան-Չեխոսլովակիա կանանց խաղից (հաղթել է Հայաստանի կանանց թիմը, պաշտպանվում է՝ Ջ. Ամյանը), Հանրապետական մարզադաշտ, 1955թ.*



**Ջեննա Ամյան.** ծնվել է 1931թ. հոկտեմբերի 3-ին Լենինականում: Առաջին մարզիչը եղել է Արշավիր Գաբրիելյանը (Արշո), ով հետագայում տեղափոխվեց Երևան և աշխատեց հանրապետության կանանց և տղամարդկանց առաջատար թիմերի և հավաքականների հետ: 1947թ. Լենինականի հավաքական թիմի կազմում մասնակցել է հանրապետության երեք քաղաքների առաջնությանը (Երևանի «Դինամո», Կիրովականի և Լենինականի հավաքական թիմեր): 1949թ. թիմը մասնակցել է Հայաստանի գավաթի մրցումներին և, շահելով գավաթը, իրավունք է ստացել մասնակցելու ԽՍՀՄ գավաթի առաջնությանը: Հաջորդ հանդիպումը եղել է Լատվիայի թիմի հետ Լենինականում: Հաղթելով վերջինիս՝ հաջորդ հանդիպումն անցկացրել է Ռոստովում, որտեղ, սակայն, պարսվելով տեղի կանանց թիմին, դուրս է մնացել հետագա պայքարից (թիմի մարզիչ՝ Ա. Օգանով): Հայաստանից մասնակցել են Նինել Հովհաննիսյանը, Ն. Հանեսոլյանը, Ջեննա Ամյանը և ուրիշներ: 1949թ. մասնակցել է Ֆիզկուլտուրայի ինստիտուտների համամիութենական կենտրոնական խորհրդի առաջնությանը: 1949թ. Ֆիզկուլտուրայի ինստիտուտի ռեկտոր Հ. Փարսադանյանի խորհրդով տեղափոխվում է Երևան, ընդունվում Ֆիզկուլտուրայի ինստիտուտ և խաղում ՖԻՄԱ-ի կազմում: Ժողովրդների 5 սպարտակիստների մասնակից, հանրապետության բազմակի չեմպիոն:

1949թ. Ֆիզկուլտուրայի ինստիտուտի ռեկտոր Հ. Փարսադանյանի խորհրդով տեղափոխվում է Երևան, ընդունվում Ֆիզկուլտուրայի ինստիտուտ և խաղում ՖԻՄԱ-ի կազմում: Ժողովրդների 5 սպարտակիստների մասնակից, հանրապետության բազմակի չեմպիոն:



*Ձախից երկրորդը՝ 6-ամյա Սուսաննա Ամյան՝ Ջ. Ամյանի կրպսեր քույրը, ով հետագայում դարձավ հանրապետության լավագույն խաղացողներից մեկը: Ձախից երրորդը՝ Ջ. Ամյան, հինգերորդը՝ Լ. Թորոսյան, վեցերորդը՝ Ջ. Իսայելյան*

1950թ. ընդգրկվել է ԽՍՀՄ կանանց հավաքականի թեկնածուների ցուցակում: Բազմիցս դարձել է ԽՍՀՄ «Ա» խմբի առաջնությունների ումբարկու, մասնակցել մի շարք միջազգային մրցաշարերի (Գերմանիա, Չինաստան, Չեխոսլովակիա): Ֆիզկուլտուրայի ինստիտուտը ավարտելուց հետո 1967թ. խաղացել է «Սպարտակ» ակումբում: ՀԽՍՀ բազմակի չեմպիոն: 1957թ. նրան շնորհվել է սպորտի վարպետի կոչում: Պատրաստել է մի շարք մարզիկների, ովքեր ընդգրկվել են ՀԽՍՀ կանանց և աղջիկների հավաքական թիմերում:



**Լիլա Դոսոյա (Քերովյան).** ծնվել է 1940թ. դեկտեմբերի 8-ին: 1955թ. դարձել է հանրապետության պատանեկան առաջնության չեմպիոն: 1956թ. մասնակցել է ինչպես պատանեկան, այնպես էլ ԽՍՀՄ ժողովրդների սպարտակիստներին: 1956թ. նրան շնորհվել է ԽՍՀՄ սպորտի վարպետի կոչում: «Սպարտակ» մարզական ընկերության թիմի կազմում մասնակցել է ԽՍՀՄ «Ա» խմբի առաջնություններին: Հայաստանի բազմակի չեմպիոն է: Որպես մրցավար սպասարկել է Հայաստանի Հանրապետության առաջնությունները, ինչպես նաև համահայկական և այլ միջազգային մրցաշարեր:



*Գրոհում է Լ. Քերովյանը, N 8*

**Սիրանուշ Թորոսյան.** խաղացել է Երևանի «Սպարտակ» և ՖԻՄԱ կանանց թիմերում, մասնակցել ԽՍՀՄ առաջին խմբի առաջնություններին, 1956, 1959, 1963թթ.՝ ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիստներին: Հայաստանի բազմակի չեմպիոն է, ԽՍՀՄ սպորտի վարպետ: Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է միջազգային մի շարք մրցաշարերի:





**Նինել Վիկտորի Հովհաննիսյան.** ծնվել է 1926թ. Թբիլիսիում: 1948թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը և անմիջապես անցել դասախոսական աշխատանքի նույն ինստիտուտի մարզախաղերի ամբիոնում՝ դոցենտ, պրոֆեսոր: Երկար տարիներ Ն. Հովհաննիսյանը հանդես է եկել Հայաստանի բասկետբոլի կանանց հավաքական թիմի կազմում, Հայաստանի բազմակի չեմպիոն է: ՀՀ վաստակավոր մարզիչ: Երկար տարիներ եղել է ՀՀ բասկետբոլի ֆեդերացիայի նախագահության անդամ, և որպես մրցավար սպասարկել է Հայաստանի առաջնություններ ու միջազգային խաղեր:



**Հարություն Հովհաննեսի Դավթյան.** ծնվել է 1924թ. ապրիլի 17-ին Ալեքսանդրիայում (Եգիպտոս): Վախճանվել է 1992թ. նոյեմբերի 11-ին Երևանում: 1948-1952թթ. սովորել և ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Եղել է «Սպարտակ» մարզական ընկերության մարզիչը, միաժամանակ աշխատել է Լենինյան և Արաբկիր շրջանների մար-

զադպրոցներում: Հ. Դավթյանի մարզած «Սպարտակ» բասկետբոլի կանանց թիմը 1963թ. նվաճել է «Սպարտակ» մարզական ընկերության կենտրոնական խորհրդի չեմպիոնի կոչումը, ավելի քան 15 անգամ նվաճել է կանանց բասկետբոլի հանրապետության չեմպիոնի տիտղոսը: 1964թ. Հ. Դավթ-



*Երևանի բասկետբոլի «Սպարտակ» տղամարդկանց թիմը, 1954-55թթ.: Աջից առաջինը՝ Հ. Դավթյան, չորրորդը՝ Համլետ Առաքելյան, վեցերորդը՝ Ժ. Մակարյան*

յանին շնորհվել է Հայաստանի վաստակավոր մարզիչի պատվավոր կոչում: Երկար տարիներ մարզել է հանրապետության կանանց բասկետբոլի հավաքական թիմը: Հ. Դավթյանի սաներից շատերը հանդես են եկել ԽՍՀՄ տարբեր տարիքի հավաքական թիմերում: Մարզիչական ակնառու գործունեության համար 1971թ. Հ. Դավթյանին շնորհվել է ԽՍՀՄ վաստակավոր մարզիչի կոչում, որը միակն է մեր հանրապետությունում:



Կիևի (Ուկրաինա) դպրոցականների սպարտակիադային նախապատրաստվող Հայաստանի պատանիների հավաքական թիմը, 1955թ.: Ձախից աջ կանգնած են՝ Էդուարդ Վաթյան, Բորիս Գեբրով, Հակոբ Իսկուդարյան, Վիտալի Շիխնյան, Արեստրակես (Ալիկ) Նավասարդյան, Մեյսա Հարությունյան: Ձախից աջ նստած են՝ Ռոմիկ Տիգրանյան (Կոմս), Գագիկ Գումենդարյան, Ժիրայր Սեմերջյան, Գուրգեն Հովհաննեսյան, Յուրի Աղլամազյան



Դպրոցականների համամիութենական սպարտակիադայի մասնակից Հայաստանի պատանիների ու աղջիկների հավաքական թիմերը, Կիև, 1955թ.: Մարզիչ՝ Ժ. Սարգսյան



Հայաստանի տղամարդկանց հավաքական թիմը, 1963թ.: Ձախից աջ կանգնած են՝ մարզիչ՝ Աբրահամ Համամջյան, Յուրի Աղլամազյան, Էդուարդ Վաթյան, Լևոն Սահակյան, Ժիրայր Սեմերջյան, Վագգեն Միրիջանյան, Գագիկ Վարդանյան, Սերգեյ Թաշչյան, Ֆրունզիկ Գրիգորյան, Արմեն Ազիզյան: Աջից առաջինը՝ Սերջյավիչյուս Վինցես (Ռոզա): Նստածների շարքում ձախից առաջինը Ռոմիկ Գրիգորյանն է



*Երևանի պիոներների պալատի բակի բակետրոլի բաց հրապարակում, 1963թ.: Աջից ծախ՝ Ռուսիկ Գրիգորյան, ձախից երրորդը՝ Վինցես Սերջյավիչյուս (մարզիչ), Յուրի Աղամազյան, Ժիրայր Սեսիրջյան, Վազգեն Միրիջանյան, Էդիկ Վաթյան, Սրապիոն (Սերգեյ) Թաշյան, Գագիկ Վարդանյան*

Հայաստանի տղամարդկանց հավաքականը 1967թ. Ժողովուրդների սպարտակիադային նախապատրաստելու համար 1963թ. Լիտվայիից Հայաստան հրավիրվեց բակետրոլի մարզիչ Վենցես Սերջյավիչյուսը (Ռուզա):

1965-75թթ. Հայաստանում կանանց ուժեղագույն թիմը Երևանի «Սպարտակ»-ն էր (ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ՝ Հ. Դավթյան):

Այդ տարիներին թիմը մասնակցել է ԽՍՀՄ առաջին խմբի առաջնություններին, դարձել է ՀԽՍՀ հավաքական թիմի հիմքը, որը մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների և մի շարք միջազգային մրցաշարերի: Այդ տարիներին աչքի են ընկել Ջենմա Նալբանդյանը, Սիրանուշ Թորոսյանը, Աննա Բուդաղյանը, Լիդա Քերովբյանը, Ջենմա Խարիտոնին և ուրիշներ:



*Երևանի «Սպարտակ» կանանց հավաքական թիմը, 1960թ.: Մարզիչ՝ Հ. Դավթյան: Ձախից աջ նստած են՝ Լիլյա Լեսնովա, Լիդա Ավագյան, Ջուլիետա Խաչատրյան, Իրա Ոսկանյան: Ձախից աջ կանգնած են՝ Լիդա Պոպովա (Քերովբյան), Ջենմա Նալբանդյան (Ամյան), Լենա Թորոսյան*



**Լիյա Լեսնովա.** ծնվել է 1942թ.: Խաղացել է Երևանի «Սպարտակ» կամավոր մարզական ընկերության հավաքական թիմում, մասնակցել է ԽՍՀՄ առաջին խմբի առաջնություններին, ինչպես նաև Հայաստանի հավաքականի կազմում 1963թ., 1967թ., 1971թ. և 1975թ. ԽՍՀՄ



ժողովուրդների սպարտակիստներին: Հայաստանի բազմակի չեմպիոն է, «Սպարտակ» կենտրոնական մարզական միության համամիութենական խաղերի հաղթող: 1963թ. Լ. Լեսնովային շնորհվել է ԽՍՀՄ սպորտի վարպետի պատվավոր կոչում:

*ԽՍՀՄ բասկետբոլի կանանց առաջնություն, Քիշինև, 1970թ.: Դրվագ Երևանի «Սպարտակ» և Դոնի Ռոստովի կանանց թիմերի հանդիպումից: «Կեռով» նետում է կատարում Լիյա Լեսնովան՝ N 4, N 6՝ էվիրա Գրոխինա, N 7՝ Ե. Կալաջյան*



**Գոհար Սումբասի Գրիգորյան.** ծնվել է 1934թ. հոկտեմբերի 17-ին Թբիլիսիում: 1952-56թթ. սովորել և ավարտել է Թբիլիսիի պետական մանկավարժական ինստիտուտը: 1956-57թթ. դարձել է ԽՍՀՄ բարձրագույն լիգայի առաջնության արժաթե մեդալակիր: Մասնակցել է ժողովուրդների համամիութենական ամառային 5 սպարտակիստների (1956թ.՝ 5-րդ տեղ, 1963թ.՝ 4-րդ տեղ, 1971թ.՝ 9-րդ տեղ):

1965թ. ընդգրկվել է ԽՍՀՄ երիտասարդական հավաքականի կազմում:

մում: 1965թ. համաշխարհային ունիվերսիադայում (Հունգարիա) ԽՍՀՄ ուսանողական հավաքականի կազմում զբաղեցրել է առաջին տեղը: 1955թ. ստացել է ԽՍՀՄ սպորտի վարպետի կոչում:



*Գրոհում է Գոհար Գրիգորյանը՝ N 9*



**Ջենմա Խարիտոնի Իսրայելյան.** ծնվել է 1929թ. ապրիլի 21-ին Բաքվում: Վախճանվել է 2008թ. մարտի 14-ին Երևանում: 1953թ. ավարտել է Բաքվի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը: Անվանի բասկետբոլիստուհի և մարզիչ-մանկավարժ: Հայաստանի կանանց բասկետբոլի հավաքական թիմի անդամ, հանրապետության բազմակի

չեմպիոն, ԽՍՀՄ բասկետբոլի հավաքական թիմի անդամ: 1960-1992թթ. աշխատել է Երևանի խաղային մարզաձևերի մարզադպրոցի մարզիչ, Երևանի պետական համալսարանի ֆիզդաստիարակության ամբիոնի դասախոս: ԽՍՀՄ սպորտի վարպետ (1957), Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզիչ (1989):



*ԽՍՀՄ ժողովուրդների 3-րդ սպարտակիադայի մասնակից Հայաստանի կանանց բասկետբոլի հավաքական թիմը, Մոսկվա, 1963թ.: Մարզիչ՝ Հ. Դավթյան*

Հայաստանի բասկետբոլի կանանց առաջնության չեմպիոն «Սպարտակ» կանանց թիմը, 1965թ.: Ձախից աջ՝ Էլվիրա Գրուրիսի, Լիլյա Լեսնովա, Գայանե Բաղդասարյան, Ջուլիետա Խաչատրյան, 6-րդ՝ Անահիտ Սայադյան, Մարիետա Մովսեսյան, Երանուհի Կալաջյան, Աննա Բուդադյան, 10-րդ՝ Գոհար Գրիգորյան, Լյուբով Գրիչենկո



№	Фамилия, имя	Раз- ряд	Год рож- дения	Рост	Спортивная организация
Армянская ССР					
4	Леснова Лилия	мс	1941	181	«Спартак»
5	Хачатрян Маргари	кмс	1946	170	«Буревестник»
6	Короскина Тамара	кмс	1942	172	«Буревестник»
7	Амни Джемма	мс	1932	168	«Спартак»
8	Гринченко Любовь	мс	1942	165	«Спартак»
9	Керобини Лидия	мс	1940	170	«Спартак»
10	Лалаян Маргари	мс	1943	168	«Спартак»
11	Будагян Анна	мс	1939	164	«Спартак»
12	Хачатрян Джульета	мс	1944	175	«Спартак»
13	Кирчанова Лидия	мс	1943	175	«Спартак»
14	Мансурян Маргари	кмс	1947	171	«Спартак»
15	Пугачева Татьяна	мс	1943	181	«Спартак»

Капитан команды — мастер спорта Амни Д. А.  
Тренер команды — заслуженный тренер Армянской ССР Дагян А.

ԽՍՀՄ ժողովուրդների 4-րդ սպարտակիադայում Հայաստանի կանանց հավաքական թիմի կազմը (մասնակիցների ցանկը վերցված է մրցման ծրագրից), Մոսկվա 1967թ.



**Աննա Բուդադյան.** Խաղացել է «Բուրեվեստնիկ» և Երևանի «Սպարտակ» թիմերում, մասնակցել է ԽՍՀՄ առաջին խմբի առաջնություններին: Հայաստանի բազմակի չեմպիոն է, ԽՍՀՄ ժողովուրդների 5 սպարտակիականների մասնակից, ԽՍՀՄ սպորտի վարպետ:

Լ. Գրիչենկոն խաղացել է Երևանի «Սպարտակ» կանանց թիմում, մասնակցել ԽՍՀՄ առաջին խմբի առաջնություններին, մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների 4 սպարտակիականների, Հայաստանի հավաքականի կազմում՝ Հայաստանի բազմակի չեմպիոն, ԽՍՀՄ սպորտի վարպետ:

1973թ. հունվարի 24-ից 31-ը Երևանի կանանց «Սպարտակ» թիմը մասնակցեց Կիրգիզիայում ԽՍՀՄ բասկետբոլի կանանց «Ա» խմբի առաջնությանը:

ПРОГРАММА

**БАСКЕТБОЛ**

Чемпионат СССР женских команд первой группы класса «А»

24—31 января 1973 г.

ТАБЛИЦА

результатов I тура чемпионата СССР женских команд кл. «А» I группы

№ п/п	Наименование команд	Игры								Очки	Разность забитых и пропущенных мячей	Место			
		1	2	3	4	5	6	7	8						
1	Днепр—Москва	68:54	65:52	66:56	67:54	73:58	70:58	68:54	65:52	66:56	67:54	73:58	70:58		
2	Спартак—Днепропетровск	59:72	58:62	53:49	51:38	57:52	51:48	54:48	53:49	51:38	57:52	51:48	54:48	53:49	53:49
3	Спартак—Ташкент	42:26	40:26	38:26	40:26	40:26	40:26	40:26	40:26	40:26	40:26	40:26	40:26	40:26	40:26
4	Спартак—Белая	35:28	32:28	30:28	30:28	35:28	32:28	30:28	30:28	35:28	32:28	30:28	30:28	35:28	35:28
5	Разомогание—Минск	56:47	51:47	48:47	48:47	56:47	51:47	48:47	48:47	56:47	51:47	48:47	48:47	56:47	56:47
6	Спартак—Лужанье	31:18	27:18	27:18	27:18	31:18	27:18	27:18	27:18	31:18	27:18	27:18	27:18	31:18	31:18
7	Труда—Днепропетр	51:28	48:28	45:28	45:28	51:28	48:28	45:28	45:28	51:28	48:28	45:28	45:28	51:28	51:28
8	Спартак—Фрунзе	64:48	62:48	60:48	60:48	64:48	62:48	60:48	60:48	64:48	62:48	60:48	60:48	64:48	64:48

Главный судья, судья  
Всесоюзной категории И. КОТОВ  
(г. Кашане)

Главный секретарь, судья  
Республиканской категории Т. НИКИФОРОВА  
(г. Фрунзе)

Д-6002 Тип. Хол. Упр. Сов. Мин. Кирг. ССР 1973 г. № 103—209

*ԽՍՀՄ «Ա» խմբի կանանց առաջնության ծրագիրը և արդյունքները, Ֆրունզե (Կիրգիզիա), 1973թ.*



*Վայրի բասկետբոլի հավաքական թիմը, 1962թ.*

1965-75 թթ. Հայաստանում կանանց ուժեղագույն թիմը հանդիսացել է Երևանի «Սպարտակ» թիմը, մարզիչ ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ՝ Հ. Դավթյան: Այդ տարիներին թիմը մասնակցել է ԽՍՀՄ առաջնությունների, հիմք է հանդիսացել ՀՀ հավաքական թիմի, որոնք մասնակցել են ԽՍՀՄ ժողովրդների սպարտակիադաների, ինչպես նաև մի շարք միջազգային մրցաշարերի: Այդ տարիներին աչքի են ընկել Ջենմա Նալբանդյանը, Սիրանուշ Թորոսյանը, Աննա Բուդաղյանը, Լիդա Քերովբյանը, Ջենմա Խարիտոնին:



Դրվագ բասկետբոլի 1960-61թթ. ՀԽՍՀ առաջնությունից: Մրցում են Երևանի «Աշխարհանք» և ՖԻՄԱ թիմերը: Գնդակով Համլետ Առաքելյան է, N8-ը՝ Սպարտակ Ծառուկյան (Երևան, ՖԻՄԱ-ի դահլիճ)



ԽՍՀՄ բասկետբոլի առաջնություն, 1954թ.: Հայաստանի կանանց և տղամարդկանց թիմերը առաջնության բացման ժամանակ: Դրոշակակիր՝ Ս. Ծառուկյան



ՖԻՄԱ-ի բասկետբոլի տղամարդկանց թիմը, 1956թ.: Ձախից աջ՝ Կառլեն Մանուկյան (մարզիչ), ձախից 5-րդ՝ մարզական մեկնարան Արամայիս Դարիբյան, 6-րդ՝ Համլետ Առաքելյան, 8-րդ՝ Էդուարդ Մեհրաբյան, 9-րդ՝ Սերոժ Բաղդասարյան, 10-րդ՝ Սերգեյ Երիցյան, 11-րդ՝ Վուրդյա Հարությունյան



Աղջիկների Հայաստանի հավաքական թիմը, Երևան, հունիս, 1956թ.: Ձախից աջ՝ Ժակ Սարգսյան (մարզիչ), N 9՝ Լ. Քերովբյան, Ֆ. Սաղաթելյան, N 7՝ Լ. Ավագյան, N 10՝ Ռ. Թովմասյան, N 11՝ Ա. Բուդաղյան



ՖԻՄԱ-ի թիմը ԽՍՀՄ առաջնության ժամանակ, Սվերդլովսկ, 1958թ.: Օղակը գրոհում է Կ. Մանուկյանը (N 3), Ռ. Մարգարյան (N 12) և Դ. Սարգսյան





մը նախապատրաստվում էր մասնակցելու 1965թ. դպրոցականների համամիութենական սպարտակիադային

Հայաստանի աղջիկների հավաքական թիմը, Երևան, «Աշխատանք» մարզադահլիճ, 1965թ.: Մարզիչներ՝ Ա. Գաբրիելյան և Դ. Դավթյան: Գայանե Բաղդասարյան (N 8), Սուսաննա Նալբանդյան (N 7), Մարիետա Մանսուրյան (N 10), Սեդա Առաքելյան (N 12), Գայանե (N 5), Մարիետա Խաչատրյան (N 11): Ձախից աջ նստած են՝ Բելլա, Երանուհի Կալաջյան (N 15): Թի-



**Երանուհի Կալաջյան.** ծնվել է 1949թ.: Ավարտել է Երևանի պետական համալսարանը: 2007թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: ԽՍՀՄ սպորտի վարպետ է, 1965, 1967թթ. ԽՍՀՄ դպրոցականների սպարտակիադանների և 1971, 1975թթ. ԽՍՀՄ ժողովուրդների սպար-

տակիադանների մասնակից: Մարզել է ՖԻՄԱ մարզական ակումբի աղջիկների թիմը: 1999թ. ՀՀ աղջիկների հավաքական թիմի մարզիչ, բազմիցս դարձել է ՀՀ չեմպիոն: Որպես մրցավար մասնակցել է համահայկական 5 խաղերի:



ԽՍՀՄ կանանց առաջնություն, Քիշինև (Մոլդավիա), 1970թ.: Գրոհում է Ե. Կալաջյանը (N 7), (N 4) Լ. Լեւնովա




**Մարիետա Խաչատրյան.** ծնվել է 1946թ. հունվարի 3-ին Երևանում: 1963-1968թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և այդ տարիներին խաղացել է Երևանի «Բուրեվեստնիկ» կենտրոնական մարզական ընկերության

թիմում: Մեծահասակների ու պատանիների առաջնություններում բազմիցս դարձել է Հայաստանի չեմպիոն: 1962-1973թթ. խաղացել է Հայաստանի բասկետբոլի կանանց և աղջիկների հավաքական թիմերում: Մասնակցել է դպրոցականների (1963թ. Վոլգոգրադ) և ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադանների (Մոսկվա):

1966թ. Հայաստանի բասկետբոլի տղամարդկանց առաջնությունում աչքի ընկավ Երևանի «ՖԻՄԱ»-ի տղամարդկանց թիմը՝ նվաճելով հանրապետության չեմպիոնի կոչումը՝ իրավունք ստանալով մասնակցելու ԽՍՀՄ առաջին և հետագայում (1975թ.) նաև բարձրագույն խմբի առաջնություններին (մարզիչներ՝ Կ. Վարդանյան, Ռ. Մարգարյան): ՖԻՄԱ-ի բասկետբոլի տղամարդկանց թիմը մինչև 80-ական թվականների սկիզբը փայլուն հանդես եկավ ԽՍՀՄ-ի բասկետբոլի առաջնություններում: 1970թ. ՖԻՄԱ-ի բասկետբոլիստները ԽՍՀՄ ուսանողական խաղերում գրավեցին մրցանակային երրորդ տեղը:



*Ճախից նստած են՝ Ա. Առաքելյան, Ա. Ռոմյանց, երկրորդ շարքում կանգնած են՝ Ռ. Մարգարյան (մարզիչ), Ե. Դավթյան, Է. Հարությունյան, Ս. Թաշչյան, Կ. Վարդանյան (մարզիչ), Ճախից երրորդ շարքում՝ Ռ. Մարգարյան, Ա. Եվրոյենկո, Ն. Դյաչենկո, Ա. Նշանյան, Է. Աղասարյան*



**Նիկոլայ Դյաչենկո.** խաղացել է Երևանի ՖԻՄԱ-ի և Մոսկվայի ԲԿՄԱ-ի թիմերում: 1967 և 1971թթ. Հայաստանի հավաքականի, իսկ 1975 և 1979թթ. Մոսկվայի հավաքականի կազմում մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաններին: ԽՍՀՄ երիտասարդական և մեծահասակների հավաքական թիմերի անդամ է, միջազգային կարգի սպորտի վարպետ: 1973, 1974, 1976թթ. խաղացել է

ԽՍՀՄ չեմպիոն Մոսկվայի ԲԿՄԱ-ի կազմում, 1973թ.՝ ԽՍՀՄ գավաթակիր, 1973թ.՝ Եվրոպայի առաջնության 3-րդ մրցանակակիր: Բնակվում է Մոսկվայում: 1973թ. ԽՍՀՄ «Բուրեվեստնիկ» մարզական ընկերության կենտրոնական խորհրդի առաջնությանը գրավել է մրցանակային երկրորդ տեղը: 1975թ. Երևանի ՖԻՄԱ-ի տղամարդկանց թիմը հանդես է եկել ԽՍՀՄ բարձրագույն խմբում:

**Արապիոն (Սերգեյ) Թաշյան.** Խաղացել է Երևանի «Սպարտակ» և ՖԻՄԱ մարզական ակումբի տղամարդկանց թիմերում: Մասնակցել է ԽՍՀՄ առաջին խմբի առաջնությունների և ԽՍՀՄ ժողովուրդների երկու սպարտակիստների (1967, 1971), Հայաստանի բազմակի չեմպիոն, միջազգային մրցաշարերի մասնակից:

*ՖԻՄԱ-ի տղամարդկանց թիմ, «Դինամո» մարզադահլիճ, 1975թ.: ՖԻՄԱ-ի բասկետբոլի տղամարդկանց թիմը իրավունք ստացավ մասնակցելու ԽՍՀՄ բարձրագույն խմբի առաջնությանը: Ձախից աջ նստած են՝ Հ. Ամիրխանյան, Ե. Դավթյան, Վ. Զաստուխով, Մ. Նիկողոսյան, Վ. Ուսկով: Ձախից աջ կանգնած են՝ Ռ. Մարգարյան (մարզիչ), Է. Աղասարյան, Ս. Մխիթարյան, Ա. Թովսիկյան, Է. Հարությունյան, Գ. Զենցերջյան, Կ. Վարդանյան (մարզիչ)*



*Դրվագ ԽՍՀՄ բարձրագույն խմբի Կաունասի «Ժայգիրիս»-ի և Երևանի ՖԻՄԱ-ի հանդիպումից, 1975թ.: Գնդակով (N 5) Խորհրդային միության լավագույն բասկետբոլիստներից մեկը՝ Մոդեստ Դաուլատյանը և ՖԻՄԱ-ի խաղացողներ՝ N 9՝ Համլետ Ամիրխանյան, N 13՝ Արշակ Նշանյան և Եղիշ Դավթյան*



**Կոնստանտին Նիկիտայի Վարդանյան.** ծնվել է 1916թ. օգոստոսի 16-ին Երևանում: Վախճանվել է 1988թ.: 1954թ. ավարտել է Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական պետական ինստիտուտի հեռակա բաժինը: 1946-88թթ. որպես ուսումնական մասի վարիչ, դեկան աշխատել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում: 1961թ. Կ. Վարդանյանին շնորհվել է ՀԽՍՀ

վաստակավոր մարզիչի կոչում: 1946-80թթ. եղել է Հայաստանի տղամարդկանց բասկետբոլի հավաքական թիմի մարզիչ: 1978թ. շնորհվել է հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր վարպետի կոչում: Կ. Վարդանյանի գլխավորությամբ ՖԻՄԱ-ի բասկետբոլի տղամարդկանց թիմը 1966-1980թթ. մասնակցել է ԽՍՀՄ բասկետբոլի առաջին և 1976թ.՝ բարձրագույն խմբում: Նրա ղեկավարությամբ 1970թ. ՖԻՄԱ-ի տղամարդկանց թիմը նվաճել է ԽՍՀՄ ուսանողական խաղերի 3-րդ մրցանակը, իսկ 1973թ. «Բուրեվետսնիկ» կենտրոնական խորհրդի առաջնության ժամանակ՝ 2-րդ տեղը:



**Ռաֆայել Մարգարյան.** ծնվել է 1934թ. Երևանում: 1956թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Երկար տարիներ եղել է Հայաստանի, ԽՍՀՄ երիտասարդական և մեծահասակների հավաքական թիմերի անդամ: 1970թ. Ռ. Մարգարյանի ղեկավարությամբ ՖԻՄԱ-ի բասկետբոլի տղամարդկանց թիմը դարձել է ԽՍՀՄ ուսանողական խաղերի երկրորդ, իսկ 1973թ.՝ «Բուրեվետսնիկ» կենտրոնական խորհրդի առաջնության երրորդ մրցանակակիր:

Ռ. Մարգարյանի գլխավորությամբ ՖԻՄԱ-ի թիմը մասնակցել է ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնություններին: Ռ. Մարգարյանի գլխավորությամբ Հայաստանի բասկետբոլի հավաքական թիմը մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների երեք սպարտակիադաններին (1967, 1971, 1975): 1989թ. տեղափոխվել է ԱՄՆ:

ՖԻՄԱ-ի բասկետբոլի տղաների թիմը ինչպես տանը, այնպես էլ արտասահմանում (Լիբանանում, Սիրիայում, Իրանում, Իրաքում, Իսլանդիայում) փայլուն մասնակցել է միջազգային մի շարք մրցաշարերի:



*Պարսկաստան մեկնելուց առաջ, 1977թ.: Ձախից աջ նստած են՝ Ս. Մխիթարյան, Է. Հարությունյան, Վ. Ջաստուխով, Հ. Ամիրխանյան, Ե. Դավթյան, Վ. Գեղամյան, Լ. Սաֆարյան, Ա. Սարգիսյան: Ձախից աջ կանգնած են՝ Հ. Թովալյան (Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ռեկտոր, պատվիրակության ղեկավար), Կ. Վարդանյան (մարզիչ), Ն. Վ. Աղաջանյան, Վ.*

*Ա. Մինասյան, Կ. Մանուկյան, Է. Աղասարյան, Ա. Թովսիկյան, Հ. Ծաղիկյան, Վ. Ավագյան, Ռ. Մարգարյան (մարզիչ), Խ. Խաչատրյան (մրցավար)*



*Դրվագ Ալմա Աթայի (Ղազախստան) Բանակի մարզական ակումբի և ՖԻՄԱ-ի խաղից: Երևան, «Դինամո» մարզադահլիճ, 1975թ.*



**Եղիշ Լևոնի Դավթյան.** ծնվել է 1950թ.

հունիսի 5-ին: 1966-1970թթ. սովորել և ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: 1966-1984թթ. հանդես է եկել Երևանի ՖԻՄԱ-ի կազմում և մասնակցել ԽՍՀՄ «Ա» և բարձրագույն խմբի առաջնություններին: Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների 4 սպարտակիադանների (1971, 1975, 1979, 1983): 1970թ. ԽՍՀՄ սպորտի վարպետ է, Հայաստանի բազմակի չեմպիոն, 1970թ.՝ ԽՍՀՄ ուսանողական խաղերի երրորդ մրցանա-

կակիր, 1973թ.՝ «Բուրեվեստնիկ» ԽՍՀՄ կենտրոնական խորհրդի առաջնության երկրորդ մրցանակակիր, 2004թ.՝ ՀՀ վաստակավոր մարզիչ, 2007թ.՝ ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող: 1985-1989թթ. աշխատել է Ալժիրի Դեմոկրատական Հանրապետությունում, 1993-2000թթ.՝ Լիբանանում, 2000-2001թթ.՝ Սիրիայում, 1989-1993թթ.՝ մարզել է Երևանի «Ուրարտու» տղամարդկանց թիմը, մասնակցել Եվրոպայի Ռ.Կորաչի գավաթի խաղարկությանը:



**Աշոտ Գրիշայի Թուխիկյան.** ծնվել է 1955 թ. մայիսի 13-ին: 1973-77թթ. սովորել Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում: Հայաստանի բասկետբոլի տղամարդկանց թիմի կազմում մասնակցել է 1975, 1979, 1983թթ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաներին: 1970թ. ԽՍՀՄ ուսանողական խաղերում զբաղեցրել է երրորդ տեղը: 1973թ.

«Բուրեվեստնիկ» կամավոր մարզական ընկերության կենտրոնական խորհրդի առաջնության երկրորդ մրցանակակիր է: 1973թ. ՖԻՄԱ-ի կազմում բազմիցս դարձել է հանրապետության չեմպիոն, ընդգրկվել ԽՍՀՄ բասկետբոլի երիտասարդական հավաքականի կազմում: 1975թ ՖԻՄԱ-ի կազմում մասնակցել է ԽՍՀՄ բարձրագույն խմբի առաջնությանը, 1977թ.՝ Բուլղարիայում ԽՍՀՄ ուսանողական հավաքականի կազմում համաշխարհային ունիվերսիադային: Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է մի շարք միջազգային մրցաշարերի: 1974թ.-ին Ա. Թուխիկյանին շնորհվել է ԽՍՀՄ սպորտի վարպետի կոչում: Խաղացել է Լիբանանի «Անդրանիկ» ակումբում:




**Համլետ Սերգեյի Ամիրխանյան.** ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Հայաստանի բասկետբոլի տղամարդկանց թիմի կազմում մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների մի քանի սպարտակիադաների: 1970թ. ԽՍՀՄ ուսանողական խաղերում ՖԻՄԱ-ի

թիմի կազմում գրավել է երրորդ մրցանակային տեղը: 1973թ. «Բուրեվեստնիկ» կամավոր մարզական ընկերության կենտրոնական խորհրդի առաջնությունում՝ երկրորդ մրցանակակիր: 1973թ. ՖԻՄԱ-ի կազմում բազմիցս դարձել է հանրապետության չեմպիոն: Հ. Ամիրխանյանին շնորհվել է ԽՍՀՄ սպորտի վարպետի կոչում: 1975թ. ՖԻՄԱ-ի տղամարդկանց բասկետբոլի թիմի կազմում մասնակցել է ԽՍՀՄ բարձրագույն խմբի առաջնությանը, բազմաթիվ միջազգային խաղերի: Մահացել է ԱՄՆ-ում:



**Արշակ Նշանի Նշանյան.** ծնվել է 1950թ. մայիսի 9-ին: Խաղացել է ՖԻՄԱ-ի կազմում և դարձել Հայաստանի բազմակի չեմպիոն: 1971, 1975 և 1979թթ. Հայաստանի տղամարդկանց բասկետբոլի հավաքականի կազմում մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաներին: 1970թ. ԽՍՀՄ ուսանողական խաղերի երրորդ, 1973թ. Երևանի ՖԻՄԱ-ի կազմում՝ «Բուրեվեստնիկ» կենտրոնական


խորհրդի առաջնության երկրորդ մրցանակակիր: Մասնակցել է մի շարք միջազգային մրցաշարերի, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: 1988թ. տեղափոխվել է ԱՄՆ:



**Խաչատուր Խաչատրյան.** ծնվել է 1934թ. դեկտեմբերի 28-ին Երևանում: 1951-1952թթ. Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է Սարատովում և Օրջոնիկիձեում ԽՍՀՄ երիտասարդական առաջնություններին: 1955-1960թթ. սովորել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում: 1955-1965թթ. խաղացել է Հայաստանի մեծահասակների թիմում: 1965-1984թթ. աշխատել է

սպորտի պետական կոմիտեում: 1965թ. Խ. Խաչատրյանին շնորհվել է համամիութենական կարգի մրցավարի պատվավոր կոչում: Որպես մրցավար սպասարկել է տարատեսակ մրցումներ: 1979-1982թթ. աշխատել է Ալժիրի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունում

որպես մարզիչ, 1984-2000թթ.՝ 26 կոմիսարների շրջանի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն, այնուհետև՝ որպես մարզիչ:



**Մարտունիկ Ղազարի Չոլախյան.** ծնվել է

1937թ. մարտի 8-ին Լենինականում: Մահացել է 2008թ. ապրիլի 24-ին Երևանում: 1961թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Հայաստանի անվանի մարզիկ և մարզիչ: 1957-1961թթ. խաղացել է Երևանի ՖԻՄԱ-ի և Լենինականի «Աշխատանք» բասկետբոլի թիմերում: Հանրապետության բազմակի չեմպիոն: ԽՍՀՄ սպորտի վարպետ է (1965): 1967-1971թթ. մարզել է հանրապետության տղամարդկանց, իսկ 1974-1984թթ.՝ կանանց հավաքական թիմերը: 1984-1994թթ. մարզել է ԽՍՀՄ բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցող «Հատիս» բասկետբոլի կանանց թիմը, որը 1988թ. նվաճել է ԽՍՀՄ գավաթը, իսկ 1986-ին գրավել 2-րդ տեղը: 1989 և 1990թթ. Մ. Չոլախյանը մարզել է աղջիկների ԽՍՀՄ երիտասարդական հավաքականը, որը 2 անգամ նվաճել է սոցիալիստական երկրների միջև անցկացվող «Բարեկամություն» խաղերի հաղթողի կոչումը: Հանրապետությունում բասկետբոլի զարգացման գործում ունեցած մեծ ներդրման համար Մ. Չոլախյանն արժանացել է հանրապետության վաստակավոր մարզիչի կոչման (1972): Մ. Չոլախյանը 1994-1995թթ. մարզել է Բուլղարիայի, 1996-1997թթ.՝ Հորդանանի, իսկ 1998թ.՝ Սիրիայի ակումբային և ազգային հավաքական թիմերը:



**Է. Հարությունյան.** ծնվել է 1948թ. հունվարի

1-ին Լենինականում: 1971թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, խաղացել է Երևանի տղամարդկանց ՖԻՄԱ-ի կազմում: ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբի առաջնության մասնակից է, ՀՀ բազմակի չեմպիոն, 1970թ. ԽՍՀՄ ուսանողական խաղերի 3-րդ մրցանակակիր: 1973թ. ՖԻՄԱ-ի կազմում դարձել է «Բուրեվեստնիկ» կենտրոնական խորհր-



դի առաջնության 2-րդ մրցանակակիր, ԽՍՀՄ սպորտի վարպետ, ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադանների մասնակից: Մարզել է կանանց «Հատիս» (երկրորդ մարզիչ), տղամարդկանց «Ուրարտու» թիմերը (երկրորդ մարզիչ): Երևանի ՖԻՄԱ-ի տղամարդկանց և աղջիկների թիմի մարզիչ, հանրապետության վաստակավոր մարզիչ է: Մարզիչ է աշխատել նաև Լիբանանում:

1960-ականի վերջերին ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ Մ. Չոլախյանի ղեկավարությամբ Լենինականի թիվ 17 ուսումնարանում ստեղծվեց աղջիկների բասկետբոլի թիմ: Նորաստեղծ թիմը մասնակցելով ԽՍՀՄ ուսումնարանների 17-րդ սպարտակիադային՝ գրավեց առաջին տեղը և հիմք դրեց հետագա մարզական հաջողությունների: Թիմը հանդես եկավ «Բուրեվեստնիկ», «Աշխատանք», Երևանի «Ձենիթ», Աբովյանի «Հատիս» անուններով: 1970թ. աղջիկների թիմը կարողացավ պայքարել այդ տարիներին Հայաստանի ուժեղագույնների՝ Հայաստանի բազմակի չեմպիոն, ԽՍՀՄ «Ա» խմբի առաջնությունում հանդես եկող Երևանի «Սպարտակ»-ի և ՖԻՄԱ-ի աղջիկների թիմերի հետ: Հաղթելով Հայաստանի առաջնությունում՝ իրավունք ստացավ մասնակցելու ԽՍՀՄ «Ա» խմբի առաջնությանը: 1983թ. Երևանի «Սպարտակ» և Լենինականի «Բուրեվեստնիկ» կանանց թիմերի խաղացողներով կազմավորվեց Աբովյանի «Հատիս»-ը, որը փայլուն հանդես եկավ ԽՍՀՄ առաջին, իսկ հետո նաև բարձրագույն խմբում (մարզիչներ՝ Մ. Չոլախյան և Է. Հարությունյան):



*ԽՍՀՄ ուսումնարանների 14-րդ սպարտակիադայի չեմպիոն Լենինականի թիվ 17 ուսումնարանի աղջիկների բասկետբոլի թիմը, 1973թ.: Աջից առաջինը կանգնած է գլխավոր մարզիչ Մ. Չոլախյանը, աջից ձախ՝ հինգերորդը Ա. Նավասարդյանն է (մրցավար), ձախից երկրորդը կանգնած է Հ. Առաքելյանը (մարզիչ)*



*Հայաստանի չեմպիոն Լենինականի բասկետբոլի կանանց թիմը: Ձախից աջ 1-ին շարք՝ Նելլի Ավետիսյան, Վարսիկ Նիկողոսյան, Վարդուհի Նալչաջյան, Ռաֆիկ Չոխիսյան (մարզիչ), Նապայա Երմակ, Իզոլդա Սահակյան, Տափյանա Ջուբ: 2-րդ շարք՝ Խանում Նիկողոսյան, Լուիզա Կարապետյան, Անահիտ Պողոսյան, Անահիտ Կոխպեցյան, Վարդիթեր Մալումյան*

1985թ. Պենզայում անցկացվեցին կանանց առաջին խմբի վեց ուժեղագույն թիմերի վերջին երկրորդ շրջանի խաղերը: ԽՍՀՄ բարձրագույն խումբ անցնելու համար «Հատիս»-ի աղջիկներին անհրաժեշտ էր ընդամենը մեկ հաղթանակ: Առաջին իսկ խաղում Լ. Վորոնենկոն, Ա. Հակոբյանը, Ա. Տորոռոշենկոն, Լ. Ալեքսանդրովան, Ա. Սարգսյանը մեծ վերելքով անցկացրին խաղը և, հաղթելով «Ինժոդոստրոյի» աղջիկների թիմին, ապահովեցին իրենց տեղը ԽՍՀՄ բարձրագույն խմբում: «Հատիս»-ի այս մրցաշարի մասնակցության մասին ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Եվգենի Շվամը գրել է. «Ինձ հաճույք է պատճառում երևանցի աղջիկների արագ և տակտիկապես հագեցված խաղը: Հիշում եմ 1950-ականների ՖԻՄԱ-ի աղջիկներին՝ Ամյանին, Թորոսյանին, Տոմիլինային, Դիմիտրիևային, Կոկոևային, ովքեր գալիք սերնդի համար փայլուն բասկետբոլային ավանդույթներ թողեցին, և այդ սերունդը եղավ «Հատիս»-ի աղջիկների թիմը: «Հատիս»-ը հաճելիորեն զարմացրեց մեզ բոլորիս. հարձակման ժամանակ ցուցադրեց ժամանակակից ու արդյունավետ խաղ՝ հստակ և հուսալի խաղալով նաև պաշտպանությունում»: Այս հաջողությունների մասին գրել է նաև անվանի բասկետբոլիստուհի Ջ. Ամյանը. «Գրեթե երեք տասնյակ տարիներ Հայաստանի կանանց բասկետբոլիստուհիները ձգտում էին իրենց համար ուղի հարթել դեպի բարձրագույն խումբ: Ճիշտ է՝ Երևանի «Սպարտակ»-ն ու Լենինականի «Բուրեվեստնիկ»-ը հուսադրող ելույթներ ունենում էին, սակայն նրանց երազանքը այդպես էլ չիրականացավ: Մ. Չոլախյանին հաջողվեց միավորել հանրապետության բոլոր առաջատար ուժերը և ստեղծել մի կուռ կոլեկտիվ, որը բռնեց առաջընթացի ճիշտ ուղին: Քրտնաջան պարապմունքները տվեցին

ցանկալի արդյունք, և Աբովյանի «Հատիս»-ը, փաստորեն, մեկ շնչով անցկացնելով ողջ առաջնությունը, վերջապես հասավ երանելի նպատակին՝ ձեռք բերեց բարձրագույն խմբում հանդես գալու իրավունք»:



*Աբովյանի «Հատիս» կանանց թիմը: Ձախից աջ կանգնած են՝ Է. Հարությունյան (մարզիչ), Աննա Տորորոշենկո, Լյուդմիլա Վորոնենկո, Անահիտ Հակոբյան, Իրինա Սերոյուկ, Լյուբով Ալեքսանդրովա, Մարտունիկ Չոլախյան (գլխավոր մարզիչ): Ձախից աջ նստած են՝ Արմինե Ավետիսյան, Մադլենա Կոշկարյան, Ռուզաննա Ֆահրադյան, Լուիզա Կարապետյան, Անահիտ Սարգսյան*

**Լյուդմիլա Վորոնենկո.** խաղացել է Լենինականի կենտրոնական մարզական ընկերության «Բուրեվեստնիկ» թիմում, Երևանի «Ձենիթ» և Աբովյանի «Հատիս» ակումբներում: Մասնակցել է ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբի առաջնություններին: Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է 1979թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադային: 1988թ. ԽՍՀՄ գավաթի խաղարկության գավաթակիր է, 1990թ. Լ. Ռոնկետիի գավաթի մասնակից, Հայաստանի բազմակի չեմպիոն, համամիութենական և միջազգային մրցաշարերի մասնակից, ԽՍՀՄ սպորտի վարպետ, ԽՍՀՄ երիտասարդական հավաքականի անդամ:

**Ռուզաննա Ֆահրադյան.** խաղացել է Երևանի «Ձենիթ» և Աբովյանի «Հատիս» թիմերում: Մասնակցել է ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբի առաջնություններին: Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է 1983թ. ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադային: 1988թ. ԽՍՀՄ գավաթի խաղարկության գավաթակիր է, 1990թ. Լ. Ռոնկետիի գավաթի մասնակից, Հայաստանի բազմակի չեմպիոն, համամիութենա-



*Ձախից՝ Անահիտ Հակոբյանը և Շուշանիկ Սահակյանը*

կան և միջազգային մրցաշարերի մասնակից, ԽՍՀՄ սպորտի վարպետ:

**Ա. Հակոբյան.** ԽՍՀՄ սպորտի վարպետ, խաղացել է Երևանի «Ջենիթ» և Աբովյանի «Հատիս» ակումբներում: ԽՍՀՄ ժողովրդների սպարտակիադանների և ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնությունների, 1990թ. Լ. Ռոնկետիի գավաթի խաղարկության մասնակից, 1988թ. ԽՍՀՄ գավաթակիր: Խաղացել է նաև Ֆրանսիայի տարբեր ակումբներում:

«Հատիս»-ը, 1989թ. մայիսին Վանաձորում պատասխան հանդիպման ժամանակ հաղթելով ԽՍՀՄ բարձրագույն խմբի առաջատար Կիևի «Դինամո»-ի աղջիկների թիմին, նվաճեց ԽՍՀՄ գավաթը և իրավունք ստացավ մասնակցելու Եվրոպայի գավաթակիրների գավաթի մրցումներին:



*ԽՍՀՄ գավաթակիր «Հատիս» թիմը, 1989թ.: Ձախից երկրորդը կանգնած է Լ. Մխիթարյանը (բժիշկ), այնուհետև՝ Ա. Հակոբյանը, Կ. Մարտիրոսյանը, Ա. Տորոռոշենկոն, Մ. Չոլախյանը (ավագ մարզիչ), Ե. Բուզմակովան, Լ. Վորոնենկոն, Է. Հարությունյանը (մարզիչ), Ա. Աթոյանը (գիտական խմբի ղեկավար),*

*առաջին շարքում ծախից աջ՝ Գ. Մելիկովա, Լ. Ալեքսանդրովա, Ա. Սարգսյան, Ռ. Ֆահրադյան, Ի. Խաչատրյան, Գ. Չուդիկ*

«Հատիս»-ի կազմում այդ տարիներին իրենց վարպետությամբ աչքի ընկան միջազգային կարգի սպորտի վարպետ Ա. Սարգսյանը, սպորտի վարպետներ՝ Ա. Հակոբյանը, Լ. Վորոնենկոն, Լ. Ալեքսանդրովան, և Է. Բունիաթյանը:



**Ա. Սարգսյան.** Եվրոպայի կրկնակի չեմպիոն, համաշխարհային ունիվերսիադայի հաղթող, ԽՍՀՄ գավաթակիր, միջազգային կարգի սպորտի վարպետ, խաղացել է Երևանի «Սպարտակ» և Մոսկվայի «Սպարտակ» թիմերում: ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնությունների մասնակից է, 1976թ. 16-17 տարեկան աղջիկների Եվրոպայի առաջնության չեմպիոն, 1979թ. Եվրո-

պայի 18-19 տարեկան աղջիկների չեմպիոն, 1981թ. ունիվերսիադայի չեմպիոն, 1988թ. ԽՍՀՄ գավաթակիր «Հատիս»-ի կազմում, Հայաստանի բազմակի չեմպիոն, ԽՍՀՄ ժողովրդների սպարտակիստական մասնակից: Երկար տարիներ «Հատիս» կանանց բասկետբոլային թիմի ավագն էր:




**Էլենա Բունիաթյանց (Շաքիրովա).** ծնվել է 1970թ. Թուրքմենիայի Մարի քաղաքում: 1986-87թթ. խաղացել է Աբովյանի «Հատիս»-ում: 1988-1992թթ. հանդես է եկել Մոսկվայի ԲԿՄԱ-ի, 1991թ.՝ ԽՍՀՄ չեմպիոն ԲԿՄԱ-ի կազմում, 1992թ. Բարսելոնայի օլիմպիական խաղերի չեմպիոն՝ ԱԴԿ-ի կազմում: Ստացել է ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետի կոչում:

1992-95թթ. խաղացել է Բրազիլիայում, 1995թ.՝ Ավստրիայում: 1996թ. մասնակցել է Ատլանտայի, իսկ 2000թ.՝ Սիդնեյի օլիմպիական խաղերին և զբաղեցրել վեցերորդ տեղը: 1997թ. Ֆրանսիական Օրջի թիմի կազմում դարձել է Ֆրանսիայի առաջնության արծաթե մեդալակիր:



ԽՍՀՄ 53-րդ առաջնություն, բարձրագույն խումբ: Մարզիչներ Մ. Չոլախյանը և Է. Հարությունյանը



Տուգանային նետում է կատարում Լ. Աղեքսանդրովան՝ N 13: Հետևում կանգնած է Լուիզա Կարապետյանը՝ N 6



**Լյուբով Ալեքսանդրովա (Քոչարյան).**

հանդես է եկել Երևանի «Ձենիթ» և Արուսյանի «Հատիս» թիմերում: ԽՍՀՄ կանանց հավաքականի կազմում 1987թ. դարձել է Եվրոպայի չեմպիոն: Միջազգային կարգի սպորտի վարպետ է: 1988թ. ԽՍՀՄ կանանց բասկետբոլի առաջնությունում գրավել է հինգերորդ տեղը, ԽՍՀՄ գավաթակիր, հետագայում խաղացել է նաև Ֆրանսիական ակումբներում:



*Կանանց բարձրագույն խմբի ԽՍՀՄ 55-րդ առաջնություն, Մոսկվա, նոյեմբերի 23-29, 1987թ. (դրվագներ պարբեր խաղերից)*

Լիբանանի հայ համայնքի հրավերով 1965թ. Հայաստանի բասկետբոլի հավաքականը մեկնեց Լիբանան և Սիրիա:



*Հայաստանի բասկետբոլի հավաքականը Հայեպում, 1965 թ.: Կանգնած են՝ Ա. Անդրեյչենկո, Դ. Սարգսյան, Ռ. Մարգարյան, Ռ. Մարգարյան, Ա. Ազիզյան, Ս. Թաշչյան, Գ. Վարդանյան: Նստած են՝ Լ. Իսահակյան, Ա. Ալաջաջյան, Վ. Զասպուխով, Ֆ. Գրիգորյան, մարզիչ՝ Ա. Համամջյան*

Մեր հավաքականը Լիբանանում անցկացրեց մի շարք հանդիպումներ, որոնցից հիշարժան է Լիբանանի չեմպիոն «Սպորտինգ» ակումբի հետ խաղը, որը 68-52 հաշվով ավարտվեց մեր հավաքականի հաղթանակով: Այս խաղում իրենց գերազանց դրսևորեցին ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ Ա. Ալաջաջյանը և այդ տարիներին ԽՍՀՄ պատանեկան հավաքականի անդամ Վ. Զաստուխովը, ով իր թիմին բերեց քսաներկու միավոր: Հայաստանի հավաքականը Հալեպում անցկացրեց տասնմեկ հանդիպում և ոչ մեկում չպարտվեց: Դժվարին պայքարում մեր հավաքականը հաղթեց նաև Սիրիայի չեմպիոն «Սերքլ Սպորտիվ» ակումբին:

Մի շարք բասկետբոլիստներ, մարզիչներ, մրցավարներ, ովքեր ժամանակին եղել են Հայաստանի հավաքականում կամ աշխատել են ակումբներում, տեղափոխվել են ԱՄՆ և խաղացել հայկական տարբեր թիմերում: Հայկական համայնքի հրավերով նրանք մեկնել են Կանադա և մի քանի հանդիպում ունեցել տեղի վետերան բասկետբոլիստների հետ:



Կալիֆորնիայի Փասսեդենայի ՀՔԸՄ-ի թիմը, 1993թ.: Ձախից աջ նստած են՝ Հ. Թորոսյան, Ռ. Գրկչյան, Հ. Դավթյան, Հ. Ամիրխանյան, Հ. Երմակյան, Մ. Ալեքսանյան: Կանգնած են՝ Հ.Կանոնջյան, Ռ. Մարգարյան, Վ. Շալջյան, Է. Նշանյան, Հ.

Ջենջերջյան, Ռ. Համամջյան, Գ. Ջենջերջյան, Գ. Շալջյան, Է. Միրզոյան, Մ. Պեսնիկյան (մրցավար), Ա. Համամջյան (մարզիչ), կենտրոնում՝ Գ. Գրիջյանի այրին:

1980-ական թվականների կեսերից մի շարք հայաստանցի բասկետբոլիստներ և մարզիչներ մեկնեցին արտասահման: 1992թ. Բուլղարիա մեկնեցին Ն. Մանուչարյանը, Լիբանան՝ Տ. Գեոկչյանը, Ա. Հովհաննիսյանը, Վ. Խաչատրյանը, Հ. Սայադյանը, Լ. Ավագյանը, աղջիկներից՝ Ա. Հակոբյանը, Լ. Ալեքսանդրովան, Լ. Տորոռոշենկոն և ուրիշներ: Մարզչական աշխատանքի մեկնեցին Խ. Խաչատրյանը (Ալժիր), Վ. Զաստուխովը (Աֆղանստան, Իրան), Մ. Չոլախյանը (Հորդանան, Սիրիա, Կամբոջա, Բուլղարիա), Է. Հարությունյանը (Լիբանան), Ե. Դավթյանը (Ալժիր, Լիբանան, Սիրիա):

**Ներսես Մանուչարյան.** ծնվել է 1967թ. հուլիսի 9-ին Երևանում: Ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստի-



տուտը: 1978թ. Քիշինկում (Մոլդովա) մասնակցել է համամիութենական «մինի» բասկետբոլի առաջնությանը և զբաղեցրել երկրորդ, իսկ 1980թ. Ֆերգանայում (Ուզբեկստան)՝ երրորդ տեղը: 1984թ. Տաշքենդում (Ուզբեկստան) մասնակցել է համամիութենական պատանեկան սպարտակիադային՝ գրավելով տասներորդ տեղը: 1985թ. Լենինգրադում տեղի ունեցած

ԽՍՀՄ երիտասարդական առաջնությունում ճանաչվել է լավագույն ռմբարկու: ՖԻՄԱ և «Ուրարտու» ակումբների կազմում դարձել է Հայաստանի բազմակի չեմպիոն: «Ուրարտու» մարզական ակումբի կազմում մասնակցել է նաև ԽՍՀՄ առաջին խմբի առաջնություններին, 1992-97թթ. խաղացել է Բուլղարիայում, 1997թ. մասնակցել է Եվրոլիգայի առաջնությանը:



*Համամիութենական պատանեկան սպարտակիադայի մասնակից Հայաստանի պատանիների հավաքականը, Տաշքենդ (Ուզբեկստան), 1984թ.: Մարզիչներ՝ Ռ. Մարգարյան (ձախից առաջինը), Ա. Վեհապետյան (աջից առաջինը):*

1989-1991թթ. «Ուրարտու» թիմում հանդես են եկել նաև Եվրոպայի չեմպիոն Ա. Լենդելը, աշխարհի, Եվրոպայի առաջնությունների, 1972թ. Մյունխենի օլիմպիական խաղերի չեմպիոններ, սպորտի վաստակավոր վարպետներ Ա. Ժարնուհամեդովը և Վ. Ժիգիլին:





«Ուրարտու» տղամարդկանց բասկետբոլի թիմը, 1990թ.: Ձախից աջ կանգնած են՝ Է. Հարությունյան (մարզիչ), Վ. Խաչատրյան, Գ. Նիսանով, Ն. Խաչատրյան, Ա. Տերենյա, օլիմպիական խաղերի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ Վ. Պանկրաշկին, Տ. Գեոկչյան, Խ. Մայցև, Ա. Գրոշով, Վ. Ջաստրուխով (գլխավոր մարզիչ): Ձախից աջ նստած են՝ Է. Հարությունյան, Հ. Սայադյան, Լ. Ավագյան, Ն. Մանուչարյան, Գ. Զիվարյան, Ա. Սահակյան և Հ. Ծաղիկյան:

«Ուրարտու» բասկետբոլային ակումբի ղեկավարն է եղել մեծ գործարար և բարերար Հ. Վարդանյանը, ով ժամանակին հանդես է եկել Հայաստանի հավաքականի կազմում:



**Հ. Վարդանյանը** ծնվել է 1949թ. հունվարի 23-ին Երևանում: Մահացել է 2014թ. ապրիլի 20-ին: 1989–2002թթ. Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի նախագահն էր: Եթե հաշվի առնենք նշված ժամանակաշրջանը, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի մեծ աշխատանք է կատարվել Հ. Վարդանյանի կողմից Հայաստանում բասկետբոլ մարզաձևի պահպանման և զարգացման համար: Նրա նախաձեռնությամբ Երևանի ծխախոտի գործարանին կից կառուցվել է մարզադահլիճ, որտեղ մարզվում էին ինչպես տղամարդկանց ու կանանց, այնպես էլ պատանիների ու աղջիկների թիմերը, որոնք հետագայում համալրեցին Հայաստանի տարբեր տարիքային խմբերի հավաքականները: Հետագայում կառուցվեց տարբեր մարզաձևերի համար նախատեսված նոր և ժամանակակից մարզահամալիր, որում իր առանձնահատուկ տեղն ունի բասկետբոլի դահլիճը, ուր անցկացվում են մարզումներ, Հայաստանի առաջնություններ և տարբեր նշանակության միջազգային մրցաշարեր: Մեծ է Հ. Վարդանյանի դերը Հայաստանի բասկետբոլի զարգացման գործում:



Դրվագ Երևանի ՖԻՄԱ-ի և Կրասնոդարի «Սպրոդիտել»-ի խաղից: Գրոհում է Լ. Ավագյանը (Կրասնոդար)



**Լորիկ Ավագյան.** Ծնվել է 1960թ. նոյեմբերի 9-ին: 1979-83թթ. սովորել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում: ՀՀ բազմակի չեմպիոն է: 1979 և 1983թթ. մասնակցել է ԽՍՀՄ Ժողովուրդների երկու սպարտակիադաներին: 1993թ. «Ուրարտու» թիմի կազմում (մարզիչ՝ Ե. Դավթյան) մասնակցել է Եվրոպայի Ռ. Կորաչի գավաթի մրցումներին: 1995թ. նրան

շնորհվել է սպորտի վարպետի կոչում, 1994-99թթ. խաղացել է Լիբանանում, 1999-2002թթ. որպես մարզիչ աշխատել է Լիբանանի «Անդրանիկ» ակումբում, 2002թ. մարզիչ է աշխատել Սիրիայի Հալեպ քաղաքի հայկական ակումբներում: Լ. Ավագյանի ղեկավարած «Պոլիտեխնիկ» տղամարդկանց բասկետբոլային թիմը 2005, 2006 և 2007թթ. դարձել է Հայաստանի առաջնությունների չեմպիոն:

Կանադայի հայ համայնքի հրավերով 1990թ. հոկտեմբերի 7-ից 21-ը Հայաստանի տղամարդկանց բասկետբոլի թիմը Հ. Վարդանյանի ղեկավարությամբ մեկնեց Կանադա՝ մասնակցելու միջազգային մրցաշարի, որտեղ մեր բասկետբոլիստները հանդիպեցին տեղի ակումբների հետ:



«Ուրարտու»-ի տղամարդկանց թիմը Կանադայում՝ «Կոնկորդիա»-ի հեղհանդիպումից առաջ, 17.10.1990թ.

Մրցաշարին մասնակից պարվիրակության կազմը.



**Վիտալի Սերգեյի Զաստուխով.** ծնվել է Երևանում 1947թ. հունիսի 24-ին: Մահացել է 2001թ. նոյեմբերի 17-ին: 1970թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, հետագայում նաև Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Խաղացել է Երևանի «Սպարտակ», ՖԻՄԱ և Մոսկվայի «Դինամո» ակումբներում: Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է ԽՍՀՄ ժողովրդների սպարտակիականերին (1967, 1971, 1975, 1979թթ.): Եղել է ԽՍՀՄ պատանեկան, երիտասարդական և մեծահասակների հավաքականների անդամ: 1966թ. ԽՍՀՄ երիտասարդական հավաքականի կազմում նվաճել է Եվրոպայի առաջնության չեմպիոնի կոչումը: 1969թ. ԽՍՀՄ մեծահասակների հավաքական թիմի կազմում դարձել է Եվրոպայի չեմպիոն: Երկու անգամ ճանաչվել է Եվրոպայի պատանիների և երիտասարդ-

ների առաջնության լավագույն խաղացող, միջազգային կարգի սպորտի վարպետ է: 1970թ. դարձել է աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր: 1972թ. ակումբային թիմերի Ռ. Ջոնսի միջմայրցամաքային գավաթի 2-րդ մրցանակակիր՝ Մոսկվայի «Դինամոյի» կազմում: 1974թ. աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր, Մոսկվայի «Դինամո» ակումբի կազմում ԽՍՀՄ չեմպիոն, Եվրոպայի գավաթի մրցաշարերի բազմակի հաղթող և մրցանակակիր: 1975թ. Վ. Զաստուխովին շնորհվել են միջազգային կարգի սպորտի վարպետի, իսկ 2000թ.՝ Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզիչի պատվավոր կոչումները: Վ. Զաստուխովը մարզել է Երևանի ՖԻՄԱ, «Ուրարտու» և «Մեծամոր» տղամարդկանց թիմերը, որոնք մասնակցել են ԽՍՀՄ առաջին խմբի առաջնություններին: 1985-88թթ. աշխատել է Հայաստանի պատանիների հավաքական թիմի հետ՝ որպես Հայաստանի բասկետբոլի տղամարդկանց հավաքական թիմի մարզիչ: Վ. Զաստուխովը աշխատել է Աֆղանստանի և Իրանի Իսլամական Հանրապետության բասկետբոլի ազգային հավաքականների հետ: 1989-91թթ. աշխատել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեում:



ԽՍՀՄ բասկետբոլի տղամարդկանց հավաքական թիմը աշխարհի առաջնության նախապատրաստական ուսումնամարզական հավաքի ժամանակ, 1974թ.: Չախից աջ կանգնած են՝ Ե. Կովալենկո (Մոսկվա), Ա. Բոլոշև (Մոսկվա), Ա. Բելով (Լենինգրադ), ավագ մարզիչ Ա. Գոմելսկի (Մոսկվա), Գ. Վոլնով (Մոսկվա), Պոլիմոզա (Ուկրաինա), Անդրեև (Մոսկվա), մարզիչ

Օզերով (Մոսկվա): Աջից ծախ նստած են՝ Մ. Պաուլուսկաս (Կաունաս), Ս. Բելով (Մոսկվա), Վ. Զաստուխով (Երևան), Ս. Սականդրեյիժե (Վրաստան), Կրիկուն (Տալին) և Տամիսյե (Տալին)



«Ուրարտու» տղամարդկանց թիմը, 1992թ.: Ձախից աջ նստած են՝ Վ. Հարությունյան, Վ. Խաչատրյան, Գ. Ջիլավյան, Ա. Խաչատրյան, Լ. Ավագյան (թիմի ավագ), Ս. Ավետիսյան (բժիշկ): Ձախից աջ կանգնած են՝ Մ. Նիկողոսյան (մարզիչ), Ա. Հովհաննիսյան, Մ. Պողոսյան, Ե. Դավթյան (գլխավոր մարզիչ), Կ. Առաքելյան, Մ. Սարգսյան, Վ. Խաչատրյան

Բասկետբոլի հիմնադրման 100-ամյակին նվիրված պատանեկան խաղեր, Սոջի, 1991թ.: Խաղերի չեմպիոն Գյումրիի աղջիկների թիմը



**Մաթևոս Նիկողոսյան.** ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Խաղացել է Երևանի ՖԻՄԱ-ի կազմում: Հետագայում տեղափոխվել է Դրոզստան և խաղացել տեղի «ԱԼԳԱ» թիմում: Մասնակցել է ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբերի առաջնությունների, ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադանների՝ Հայաստանի հավաքականի կազմում: 1973թ. «Բուրեվեստնիկ» կենտրոնական խորհրդի առաջնության երկրորդ մրցանակակիր: Որպես «Ուրարտու» տղամարդկանց թիմի մարզիչ մասնակցել է մի շարք համամիութենական և միջազգային մրցաշարերի: 1992թ. մասնակցել է Եվրոպայի Ռ. Կորաչի գավաթի մրցաշարին: ԽՍՀՄ սպորտի վարպետ, միջազգային կարգի մրցավար:



### Հարությունյան Վահագն Ալբերտի. ծնվել է

1975թ. հունիսի 14-ին: ՀՀ պատանիների և մեծահասակների բազմակի չեմպիոն: Հավաքական թիմի կազմում մասնակցել է ԽՍՀՄ բազմաթիվ մրցաշարերի և դպրոցականների սպարտակիադաների: 1993-1997թթ. սովորել և ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը:

1996թ. արժանացել է ՀՀ սպորտի վարպետի կոչման: 1991թ. մասնակցել է միջազգային մրցաշարերի՝ Վրաստան, Իրան, Շվեյցարիա, Ֆրանսիա, Խորվաթիա և այլն: 1993թ. Երևանի «Ուրարտու» թիմի կազմում մասնակցել է Ռ. Կորաչի գավաթի խաղերին: Համահայկական երեք խաղերի մասնակից է: 2005թ. Համահայկական առաջին բասկետբոլի մրցաշարի չեմպիոն, թիմի մարզիչ: 2006-2010թթ. Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար: 2010թ. Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի փոխնախագահ:

1994թ.-ի սկզբներին Հայաստանի կանանց բասկետբոլի առաջնություններում աչքի ընկան Երևանի ՖԻՄԱ-ի կանանց և տղամարդկանց թիմերը, որոնք այդ տարիներին դարձան ինչպես Հայաստանի առաջնության, այնպես էլ ուսանողական խաղերի չեմպիոններ: Մարզիկներից շատերն ընդգրկվեցին կանանց և տղամարդկանց հավաքական թիմերի կազմերում:



Հայաստանի չեմպիոն ՖԻՄԱ-ի տղամարդկանց թիմը, 1994թ.: Աջից առաջինը՝ (գլխավոր մարզիչ) Կ. Մանուկյան, ձախից առաջինը՝ (մարզիչ) Հ. Մարտիրոսյան: Եփրեմյան Արտակ (13), Ռուբինյան Հայկ (8), Բայան Տիգրան (15), Խաչատրյան Վարդան (12), Շիյան Տիգրան (9), Մարության Վարդան (5), Հարությունյան Վահագն (10), Խաչատրյան Արա

(11), Նարեկ Ղուկասյան(4), Դավթյան Արման (12), Բեգլարյան Արսեն (7)



*Երևանի ՖԻՄԱ-ի կանանց թիմը, 1994թ.: Չախից աջ կանգնած են՝ Ն. Հովհաննիսյան (մարզիչ), Ն. Եղյան, Լ. Պեպրոսյան, Լ. Մելքոնյան, Ն. Մուրադյան, Ա. Վարդյան (զխավոր մարզիչ): Չախից աջ նստած են՝ Լ. Միրազիզյան, Բ. Հարությունյան, Կ. Սարգսյան, Լ. Բաղդասարյան*



**Լիանա Բաղդասարյան.** ծնվել է 1974թ. սեպտեմբերի 5-ին Երևանում: 1986թ. հավաքական թիմի կազմում մասնակցել է ԽՍՀՄ բազմաթիվ մրցաշարերի և դպրոցականների սպարտակիականների: 1991-1995թթ. սովորել և ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, միաժամանակ խաղացել Երևանի ՖԻՄԱ-ի մարզական ակումբի թիմում: 1996թ. ստացել է ազգային սպորտի վարպետի պատվավոր կոչում: Հայաստանի հավաքական թիմի կազմում մասնակցել է բազմաթիվ միջազգային մրցաշարերի՝ Վրաստանում, Պարսկաստանում, Մալթայում, Կիպրոսում, Ավստրիայում, Անդորրայում: Համահայկական 5 խաղերի մասնակից, Հայաստանի Հանրապետության կանանց առաջնությունների բազմակի չեմպիոն: 2010թ. մասնակցել է կանանց Եվրոպայի «C» խմբի առաջնությանը՝ զբաղեցնելով երկրորդ տեղը:



*Հայաստանի բակետբոլի ֆեդերացիայի գավաթակիր, Երևանի պետական համալսարանի տղամարդկանց թիմը, 2006թ.: Սարգիշ՝ Վ. Զաքոյան*



**Չարյան Վլադիմիր Ռուբենի.** ծնվել է 1949թ.:

1972թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: 1968-1972թթ. ՖԻՄԱ թիմի կազմում մասնակցել է ԽՍՀՄ բասկետբոլի առաջնություններին: 1974-1992թթ. որպես մրցավար սպասարկել է ԽՍՀՄ երիտասարդական, «Ա» և բարձրագույն խմբերի առաջնությունները:

Համամիութենական և ազգային բարձր կարգի մրցավար է: 1975թ. աշխատել է մանկապատանեկան բասկետբոլում և պատրաստել է մի շարք բարձրակարգ մարզիկներ:

2003թ. մարզել է ԵՊՀ ակումբի տղամարդկանց բասկետբոլի թիմը, որը 2004թ. նվաճել է ՀՀ ֆեդերացիայի գավաթը:

2005-2006թթ. մարզել է ՀՀ պատանեկան հավաքական թիմը:

Ներկայումս աշխատում է Երևանի պետական համալսարանի ֆիզդաստիարակության և սպորտի ամբիոնում:

ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող է, մանկավարժական գիտությունների թեկնածու: 2014թ. նրան շնորհվել է պրոֆեսորի պատվավոր կոչում:

Հայաստանում բասկետբոլի զարգացման գործում իր ուրույն տեղն ունեն Լենինականի (Գյումրի) տղամարդկանց և կանանց թիմերը, որոնք տարբեր տարիների դարձել են Հայաստանի չեմպիոններ ու մրցանակակիրներ, մասնակցել ԽՍՀՄ տարբեր առաջնությունների և սպարտակիադաների: 1926թ. Լենինականում գործում էին տղաների և աղջիկների բազմաթիվ թիմեր. կանանցից իրենց լավագույն ձևով դրսևորեցին՝ Արփիկ Հայրբաբամյանը, Հռիփսիկ



ԽՍՀՄ բասկետբոլի առաջնություն, Խարկով, 18.11.1946թ.: Հայաստանի բասկետբոլի հավաքական թիմ: Ժորա Իսկանդարյան (N 3), Արամ Մարտիրոսյան (N 9) (Սուլախ)




Ավանակյանը, Արփինե Մխիթարյանը, Անիչկա Խաչատրյանը, Դամիկ Ավետիսյանը, Ժենյա Պետրոսյանը, Լուսյա և Գոհար Ժամկոջանները, տղաներից՝ Սաշա Խոյեցյանը, Արամ Ավանակյանը, Անդրանիկ Չախոյանը, Գառնիկ Խլղաթյանը և ուրիշներ: Բասկետբոլի առաջին խմբակները



*Հայաստանի հավաքականը, 1954թ.: Ա. Մարտիրոսյան (Սուլախ)՝ Գյումրի (N 9), Անդրանիկ Չախոյան՝ Գյումրի (N11), Ժորա Խականդարյան՝ Կիրովական (N 3)*

բացվեցին երկաթգծում և «Կառուցողներ» ակումբներում, որի գործում իրենց մեծ ներդրումն ունեն Ա. Ավանակյանը, Գ. Խլղաթյանը և Ս. Խոյեցյանը: Բացի նշված ակումբներից՝ բասկետբոլի խմբակներ կային նաև «Պոլիգոնի» որբանոցում: Այս թիմերը հաճախ ընկերական հանդիպումներ էին անցկացնում: Ինչպես նշել է Անդրանիկ Չախոյանը, ով հետագայում դարձավ Հայաստանի անվանի մարզիչներից մեկը. «Մենք մեծ բավականություն էինք ստանում այդ խաղերից և աշխատում էինք ընդօրինակել նրանց տեխնիկական և տակտիկական հնարքները»:



**Արամ (Սուլախ) Մարտիրոսյան.** ծնվել է 1920թ. մահացել է 1993թ.: 1938-1940թթ. և 1946-1952թթ. խաղացել է Լենինականի «Ռինամո» մարզական ակումբի և Հայաստանի հավաքական թիմի կազմում: Մասնակցել է ԽՍՀՄ և Հայաստանի առաջնություններին, Հայաստանի բազմակի չեմպիոն է: 1958-1961թթ. աշխատել է Գյումրիի պատանեկան հավաքական թիմի մարզիչ, 1953-1976թթ.՝ Լենինականի մարզադպրոցի տնօրեն: Արամ Մարտիրոսյանն առաջինն է, ով Լենինականում բասկետբոլ մարզաձևում ստացել է «ՀՀ վաստակավոր մարզիչ» պատվավոր կոչումը:



*Հանրապետական 3-րդ սպորտակիադա-  
յի մասնակից Լենինականի բասկետբոլի  
տղամարդկանց հավաքական թիմը, 1948թ.:  
Ձախից առաջինը թիմի ավագ Արամ Մար-  
տիրոսյանն է*

1975թ. նշվեց Լենինակա-  
նի բասկետբոլի 50-ամյակը:  
Լենինականի տղաների և  
աղջիկների թիմերը 50 տար-  
վա ընթացքում կարողացան  
մեծ արդյունքների հասնել,  
ինչպես Հայաստանի, այնպես  
էլ ԽՍՀՄ տարբեր առաջնույթ-  
յուններում: 1965թ. Լենինա-  
կանի տղամարդկանց թիմը  
իրավունք ստացավ մասնակ-  
ցելու ԽՍՀՄ «Ա» խմբի առաջ-

նությանը և 18 թիմերի մասնակցությամբ գրավեց 7-րդ տեղը, իսկ  
թիմի խաղացողները ստացան ԽՍՀՄ «սպորտի վարպետի» կոչում-  
ներ: Թիմի կազմում հանդես են եկել Ռաֆայել Չոլախյանը, Գագիկ  
Վարդանյանը, Օգեսն Գալստյանը, Ժան Հովհաննեսյանը, Սլավիկ  
Պետրուշևը, Սերգեյ Օկրասինսկին, Վլադիմիր Վոլանչուկը և Սերգեյ  
Թաշչյանը (մարզիչ՝ Սամսոն Մկրտչյան): Այժմ էլ մի շարք բասկետ-  
բոլի նվիրյալներ շարունակում են իրենց «մեծերի» ավանդույթները և  
պատրաստում շնորհալի բասկետբոլիստների, ովքեր մասնակցում են  
Հայաստանի առաջնություններին: Վերջին շրջանի բասկետբոլի նվիր-  
յալներից կարելի է նշել Սամսոն Խաչատրյանին, Ժան Հովհաննիս-  
յանին, Ղուկաս Նիկողոսյանին, Գագիկ Վարդանյանին, Արթուր Խա-  
չատրյանին, Արման Տիրայանին և շատ ուրիշների:




**Սամսոն Վազգենի Մկրտչյան.** ծնվել է 1935թ.  
հոկտեմբերի 3-ին Լենինականում: Մահացել է  
2014թ. հունիսին Երևանում: 1947թ. զբաղվել է  
բասկետբոլով: 1953թ. խաղացել է Հայաստանի  
պատանիների հավաքական թիմում և մասնակցել  
ԽՍՀՄ պատանեկան առաջնություններին: 1953-  
1954թթ. աշխատել է «Կարմիր դրոշ», հետագա-  
յում՝ «Աշխատանք» մարզական ընկերություննե-

րում: 1954-1957թթ. մասնակցել է Ուկրաինայի բասկետբոլի առաջնության մրցումներին ԲԿՄԱ-ի կազմում: 1961-1989թթ. աշխատել է Գյումրիի տղամարդկանց հավաքական թիմի մարզիչ և միաժամանակ եղել է Գյումրիի բասկետբոլի ֆեդերացիայի նախագահ: 1965-1966թթ. Ս. Մկրտչյանը որպես «Աշխատանք» բասկետբոլային թիմի մարզիչ մասնակցել է ԽՍՀՄ առաջին խմբի առաջնություններին, պատրաստել է մի շարք սպորտի վարպետներ (Մարտին Չոլախյան, Օգսեն Գալստյան, Գագիկ Վարդանյան, Ժան Հովհաննիսյան, Վալերի Չերնիշով, Սլավիկ Պետրոսյան): 1972թ. Ս. Մկրտչյանին շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր մարզիչի պատվավոր կոչում: Նրա ղեկավարած թիմը բազմիցս դարձել է Հայաստանի չեմպիոն: 2000-2014թթ. եղել է Շիրակի մարզի «Սևան» մարզական ընկերության նախագահը:



**Օգսեն Գալստյան.** ծնվել է 1939թ. փետրվարի 13-ին Երևանում: Խաղացել է Լենինականի «Լոկոմոտիվ» և «Աշխատանք» մարզական ընկերությունների բասկետբոլի թիմերում: Հայաստանի բազմակի չեմպիոն է, ԽՍՀՄ առաջին խմբի առաջնության մասնակից, Հայաստանի տղամարդկանց հավաքականի կազմում մասնակցել է մի շարք միջազգային մրցաշարերի Հայաստանում և արտասահմանում (Եգիպտոս, Լիբանան, Սիրիա և այլ երկրներ): Մասնակցել է ԽՍՀՄ ժողովրդների սպարտակիադաների: 1966թ. Օ. Գալստյանին շնորհվել է ԽՍՀՄ սպորտի վարպետի պատվավոր կոչում: Հետագայում աշխատել է որպես Գյումրիի «Աշխատանք» մարզական ընկերության տղաների թի-




Օ. Գալստյանի ԽՍՀՄ սպորտի վարպետի կրծքանշանը և գրքուկը



Ժողովուրդների 4-րդ սպարտակիադային նախապատրաստվող Հայաստանի բասկետբոլի տղամարդկանց հավաքական թիմը ուսումնամարզական հավաքի ժամանակ, Դիլիջան, 1967թ.: Աջից ծախ առաջին շարքում կանգնած են՝ Ռաֆիկ Մարգարյան, Ռաֆայել Չոլախյան, Սերգեյ Թաշչյան: Երկրորդ շարքում աջից ծախ՝ Վլադիկ Հարությունյան, Նիկոլայ Դյաչենկո, Գագիկ Վարդանյան, Օգսեն Գալստյան, Վիտալի Շիխնյան: Առջևում նստած են՝ Վիտալի Զաստրուխով, Արմեն Ազիզյան

Գյումրիի և Երևանի վերերան բասկետբոլիստների հանդիպման Գյումրիի կազմը, Երևան, «Գրանտ Տոբակո» մարզադահլիճ, 1996թ.: Ձախից աջ կանգած են՝ Ղուկաս Նիկողոսյան (մարզիչ), Աշոտ Մարտիրոսյան, Օգսեն Գալստյան, Հենրիկ Գրիգորյան, Սամսոն Մկրտչյան (մարզիչ), Գևորգ Խաչատրյան (Գյումրիի բասկետբոլի ֆեդերացիայի նախագահ), քանդակագործ Աշիկ Պապոյան, Ժան Հովհաննեսյան, Գագիկ Վարդանյան: Առաջին շարքում՝ Սամվել Տիրանյան, Հակոբ Հակոբյան, Գուրգեն Դանիելյան, Գարուշ Փաշինյան




մի մարզիչ:

**Ժան Հովհաննիսյան.** ծնվել է 1939թ. փետրվարին 23-ին, խաղացել է Լենինականի «Աշխատանք» մարզական ակումբի հավաքական թիմում: Մասնակցել է ԽՍՀՄ առաջին խմբի առաջնություններին: Միջազգային մի շարք մրցաշարերի մասնակից է, Հայաստանի բազմակի չեմպիոն, ԽՍՀՄ սպորտի վարպետ:



**Ղուկաս Գևորգի Նիկողոսյան.** ծնվել է 1941թ. մայիսի 9-ին Լենինականում: Երկար տարիներ մարզել է «Արագած» մարզամշակութային ակումբի բասկետբոլի թիմը, որը տարիներ շարունակ մասնակցել է Հայաստանի տարբեր տարիքային խմբեր

րի առաջնություններին և մրցանակային տեղեր նվաճել: 1993թ. աշխատում է Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոցում՝ մարզելով պատանիների ու մեծահասակների թիմերը: Ղ. Նիկողոսյանի գլխավորած թիմերը մասնակցել են Համահայկական խաղերին և Իրանի Իսլամական Հանրապետությունում անցկացված մի շարք միջազգային մրցաշարերին: 2000թ. Ղուկաս Նիկողոսյանին շնորհվել է Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող պատվավոր կոչում:



**Գագիկ Վարդանյան.** ծնվել է 1942թ. օգոստոսի 31-ին Ալավերդիում: 1967-76թթ. խաղացել է Երևանի «Սպարտակ» տղամարդկանց թիմում: 1967-1971թթ. Երևանի ՖԻՄԱ թիմի կազմում մասնակցել է ԽՍՀՄ առաջին խմբի առաջնություններին: Հանրապետության բազմակի չեմպիոն է, ԽՍՀՄ սպորտի վարպետ: 1965-1971թ. հանդես է եկել Հայաստանի հավաքականի կազմում: Մասնակցել է ԽՍՀՄ երկու սպարտակիստների (1967, 1971): 2012թ. շնորհվել է Հայաստանի վաստակավոր մարզիչի պատվավոր կոչում: Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է բազմաթիվ միջազգային մրցաշարերի:



**Արթուր Խաչատրյան.** ծնվել է 1964թ. հունիսի 26-ին: 1985-91թթ. որպես մրցավար մասնակցել է ԽՍՀՄ առաջին և բարձրագույն խմբի առաջնություններին: 1985թ. աշխատում է որպես մարզիչ: Մարզել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի կանանց թիմը, որը 2007, 2008 և 2010թթ. դարձել է Հայաստանի կանանց առաջնության հաղթող: Մանկավարժական գիտությունների թեկնածու է:



**Արման Տիրայան.** ծնվել է 1980թ. հունվարի 29-ին: 1996-2000թթ. սովորել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում, միաժամանակ խաղացել ՖԻՄԱ-ի տղամարդկանց թի-

մի կազմում: 1996թ. նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետության սպորտի վարպետի պատվավոր կոչում: 2003-2006թթ. մարզիչ է աշխատել Գյումրիի մարզադպրոցում: Մարզել է Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի կանանց թիմը, որը 2007, 2008, 2010թթ. դարձել է հանրապետության չեմպիոն:



*«Արագած» մարզամշակութային ակումբի 1971-72 թթ.-ին ծնված պատանիների հավաքական թիմը: Մարզիչ՝ Ղ. Նիկողոսյան*

1950-ական թվականներին Կիրովականի տղամարդկանց, կանանց և պատանեկան թիմերը հանդես են եկել Հայաստանի առաջնություններում և մրցանակային տեղեր զբաղեցրել: Կիրովականում բասկետբոլի զարգացման գործում իրենց ներդրումն ունեցան Սերյոժա Բաղդասարյանը, Ժորա Իսկանդարյանը, Վլոդյա Իսկանդարյանը, Վարդգես Վարդերեսյանը և ուրիշներ:



**Սերյոժա Խաչիկի Բաղդասարյան.** ծնվել 1935թ.

Կիրովականում: 1958թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: 1968-1970թթ. եղել է Կիրովականի «Սպարտակ» ընկերության նախագահը: 1970-1973թթ. ամբիոնի վարիչ է աշխատել Կիրովականի մանկավարժական ինստիտուտում, 1978թ.-ից Վանաձորի «Հայաստան» մարզական միության մասնաճյուղի նախագահն է: Հանդես է եկել Հայաստանի հավաքականի կազմում: 1990թ. Ս. Բաղդասարյանին շնորհվել են Հայաստանի վաստակավոր մարզիչ, 1999թ.-ին՝ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող կոչումները:



**Վոլոդյա Վաչոյի Հարությունյան.** ծնվել է 1934թ.

Կիրովականում: 1958թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Երկար տարիներ աշխատել է «Աշխատանք» մարզական միության և Կիրովականի սպորտկոմիտեի նախագահ: 1970թ. Վ. Հարությունյանին շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ պատվավոր կոչումը, իսկ 2002թ.՝ Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող կոչումը: Հայաստանի պատանեկան հավաքականի կազմում մասնակցել է համամիութենական մի շարք մրցումների:




**Վարդգես Մանասի Վարդերեսյան.** ծնվել է

1941թ. Կիրովականում: Ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի Կիրովականի մասնաճյուղը: 1958թ. Կիրովականի թիմի կազմում դարձել է Հայաստանի դպրոցականների սպարտակիադայի երկրորդ մրցանակակիր: 1959թ. Հայաստանի պատանեկան առաջնության հաղթող է: Մասնակցել և մրցանակային տեղեր է զբաղեցրել Հայաստանի սպարտակիադաներում: Որպես մարզիչ մասնակցել է նաև համամիութենական տարբեր մրցումների, գրավել մրցանակային տեղեր և արժանացել տարբեր խրախուսանքների: 2001, 2003 և 2005թթ. որպես Վանաձորի բասկետբոլի տղամարդկանց թիմի մարզիչ մասնակցել է Համահայկական մարզական խաղերին:



*Հայաստանի դպրոցականների չեմպիոն Կիրովականի և Երևանի աղջիկների թիմը, 1959թ.: Կիրովականի պատանիների թիմը. ձախից աջ՝ Լևոն Ասլանյան, Վարդգես Վարդերեսյան, Յուրա Վահանյան, Ֆուրման Ափինյան, Բորիս Ռուդ և Նիկոլայ Սալոմին*



*Համափութեանական փարբեր մրցումներում Վանաձորի բասկետբոլի թիմերի սպացած պատվոգրերը*

Վերջին տարիներին հանրապետությունում մեծ հաջողությունների են հասել Արարատի կանանց և աղջիկների թիմերը, որոնք բազմիցս դարձել են Հայաստանի առաջնությունների հաղթողներ և մրցանակակիրներ: Նման հաջողությունները մարզիչների բարեխիղճ աշխատանքի արդյունքներն են: Այս գործում մեծ ավանդ ունի Էդուարդ Վարդանյանը, ով կարողացավ իր շուրջը հավաքել շնորհալի երիտասարդ մարզիչների ու մարզիկների և զգալի հաջողությունների հասնել իր քրոնաջան աշխատանքի շնորհիվ:



**Էդուարդ Վարդանյան.** ծնվել է 1941թ. դեկտեմբերի 5-ին Լենինականում: 1958-1961թթ. սովորել և ավարտել է Երևանի մարզիչների դպրոցը և ստացել բասկետբոլի մարզիչի որակավորում: 1967-1972թթ. սովորել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում: 1972-2007թթ. աշխատել որպես Արարատի մարզադպրոցի տնօրեն: 1980թ. պարգևատրվել է «Տոնդրվողական կրթության գերազանցիկ» մեդալով: Նրա ղեկավարած աղջիկների թիմը 1992թ. Մայկոպում մասնակցել է ԽՍՀՄ մարզադպրոցների բասկետբոլի եզրափակիչ խաղերին և զբաղեցրել մրցանակային երրորդ տեղը: 1992-ից է. Վարդանյանի աղջիկների բասկետբոլի թիմը 3 անգամ Հայաստանի չեմպիոն է դարձել, 7 անգամ՝ երկրորդ և 2 անգամ՝ երրորդ մրցանակակիր: 1994թ. է. Վարդանյանին շնորհվել է Հայաստանի վաստակավոր մարզիչ պատվավոր կոչում: Որպես հավաքական թիմի երկրորդ մարզիչ (գլխավոր մարզիչ՝ Հ. Առաքելյան)



մասնակցել է Եվրոպայի մինչև 16 տարեկան աղջիկների առաջնության մրցումներին և գրավել մրցանակային երրորդ տեղը: 1988թ. Արարատի «Ավարայր» թիմով մասնակցել է Իրանի Իսլամական Հանրապետությունում անցկացված Համահայկական խաղերին և հաղթել: 1999թ. առաջին անգամ մասնակցելով Համահայկական համաշխարհային խաղերին՝ գրավել է երրորդ մրցանակային տեղը: 2003թ. ստացել է բարձրագույն մարզիչի որակավորում: 1998-99թթ. ծնված աղջիկների թիմը 2013թ. դարձավ Հայաստանի առաջնության չեմպիոն, իսկ 1999-2000թթ. ծնվածներինը՝ երկրորդ մրցանակակիր:



*Հայաստանի կանանց բասկետբոլի առաջնության չեմպիոն Արարատի թիմը, 1995թ.: Ձախից աջ կանգնած են՝ Կարինե Խեչումյան, Անուշ Հովհաննիսյան, Հռիփսիմե Աղամյան, Էդուարդ Վարդանյան (թիմի մարզիչ), Ջոյա Հովհաննիսյան, Նելլի Բաբլումյան, Էմմա Առաքելյան: Ձախից աջ նստած են՝ Քրիստինե Աղագույան, Ռուզաննա Պետրոսյան, Գոհար Օհանյան, Նելլի Չիրսեգալյան*

Տրիսիմե Աղամյան. ՀՀ սպորտի վարպետ, Հայաստանի

առաջնությունների հաղթող և մրցանակակիր, ՀՀ բասկետբոլի ֆեդերացիայի գավաթի խաղարկության (1994) երրորդ մրցանակակիր, 1997թ. զարգացող եվրոպական երկրների բասկետբոլի պատանեկան առաջնության երրորդ մրցանակակիր, 1996 և 1998թթ. Թեիրանում անցկացված 29-րդ և 31-րդ Համահայկական խաղերի չեմպիոն: Խաղացել է Լիբանանում և Իրանում:



*ՀՀ չեմպիոն, Արարատի՝ 1998-99թթ. ծնված աղջիկների բասկետբոլի թիմը, 2013թ.: Մարզիչ՝ Է. Վարդանյան*

Անկախության տարիներից հետո ինչպես մյուս մարզաձևերում, այնպես էլ բասկետբոլում հանրապետության առաջնություններին և համահայկական խաղերին ակտիվորեն մասնակցեցին նաև Լեռնային Ղարաբաղի թիմերը: «Արցախ-Ստեփանակերտ» բասկետբոլի տղամարդկանց և կանանց թիմերը դարձան Հայաստանի տարբեր տարիներին անցկացվող առաջնությունների հաղթողներ և մրցանակակիրներ:



*Արարատ քաղաքի մարզադպրոցի բասկետբոլի աղջիկների թիմը: Մարզիչ՝ Է. Վարդանյան*



*Դրվագ Երևանի «Գրանդ Քենդի» – «Արցախ-Ստեփանակերտ» հանդիպումից, 2013թ.: Մեկ րոպեանոց ընդմիջում է վերցրել «Արցախ-Ստեփանակերտ» թիմի մարզիչ Էմիլ Հովհաննիսյանը: Խաղը շահեց «Արցախ-Ստեփանակերտ» թիմը և դարձավ 2013 թ. Հայաստանի բասկետբոլի առաջնության չեմպիոն*

Հայաստանում անցկացված բասկետբոլային տարբեր մրցումների շարքում իրենց ուրույն տեղն ունեն Համահայկական խաղերը: 1999թ. օգոստոսի 28-ից սեպտեմբերի 5-ը Հայաստանում անցկացվեցին առաջին Համահայկական խաղերը, որոնց հիմնադիրը և կազմակերպիչը Աշոտ Մելիք-Շահնազար-



*Հայաստանի բասկետբոլի տղամարդկանց առաջնություն: «Էջմիածին» - «Արցախ-Ստեփանակերտ» հանդիպումից հետո, Էջմիածին, 2010թ.: Մարզիչներ՝ Էմիլ Հովհաննիսյան և Է. Առուշանյան*

յանն է: Խաղերի ծրագրով անցկացվեցին նաև բասկետբոլի մրցումներ, որոնք մասնակցեցին աշխարհի տարբեր երկրներից ժամանած տղաների 18 և աղջիկների 7 թիմերը: Մրցումներն անցկացվեցին «Գրանդ», ՖԻՄԱ և «Դինամո» մարզասրահներում: Առաջին խաղերում մրցանակային տեղեր գրավեցին տղամարդկանց և կանանց հետևյալ թիմերը. Վալեյ (ԱՄՆ) տղամարդկանց թիմը, եզրափակիչ խաղում 84:79 հաշվով հաղթելով Թեհրանի (ԻԻՀ) թիմին, դարձավ առաջին չեմպիոն: Մեծամորի տղամարդկանց թիմը 77:74 հաշվով հաղթելով Սոչիի թիմին՝ գրավեց երրորդ մրցանակային տեղը: Երևանի կանանց թիմը եզրափակիչում 74:52 հաշվով հաղթելով Լոս-Անջելեսի թիմին՝ դարձավ խաղերի չեմպիոն: Երրորդ մրցանակային տեղի պայքարում Արարատի բասկետբոլիստուհիները 74:69 հաշվով հաղթելով Հալեպի (Սիրիա) թիմին՝ դարձան երրորդ մրցանակակիր:

*Դրվագներ առաջին համահայկական խաղերից*



*Բեյրութ-Լոս Անջելես*



*Երևան-Տորոնտո*



*Երևան-Լոս Անջելես*

2001թ. անցկացվեցին Համահայկական երկրորդ խաղերը: Մրցանակային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ. տղաներ՝ Վալեյ, Սոչի, Գլենդեյլ թիմերը, կանայք՝ Երևան, Գյումրի և Թեհրանի թիմերը:

Համահայկական երրորդ խաղերի ժամանակ տղամարդկանց մրցապայքարում առաջին տեղը գրավեց Գլենդեյլի, երկրորդը՝ Երևանի, երրորդը՝ Թեհրանի թիմը, իսկ աղջիկների առաջնությունում համապատասխանաբար՝ Երևանի, Գլենդեյլի և Մոսկվայի թիմերը:

2005թ. Համահայկական բասկետբոլի մրցաշարի հաղթողներ ճանաչվեցին Երևանի տղամարդկանց և կանանց թիմերը:

Համահայկական խաղերի ծրագրով անցկացվող տղամարդկանց բասկետբոլի մրցաշարի հաղթող երևանի թիմը, 2005թ.: Սարգիս Վ. Հարությունյան (ծախից առաջինը), գլխավոր մարզիչ՝ Է. Հարությունյան (ծախից վեցերորդը)



**Արմեն Հովհաննիսյան.** ծնվել է 1971թ. օգոստոսի 10-ին Հոկտեմբերյանում: 1987-2005թթ. խաղացել է Վրաստանում, Բելառուսիայում, Իրանում և Լիբանանում: Հայաստանի բազմակի չեմպիոն է: Խաղացել է Երևանի «Ուրարտու» թիմում: 1993թ. մասնակցել է Եվրոպայի Ռ. Կորաչի անվան գավաթի մրցումներին: Ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: 2012թ Ա. Հովհաննիսյանին շնորհվել է Հայաստանի սպորտի վարպետի պատվավոր կոչում:

Համահայկական խաղերի ծրագրով անցկացվող կանանց բասկետբոլի մրցաշարի հաղթող երևանի կանանց թիմը, 2005թ.: Աջից երկրորդը՝ Հ. Առաքեյան (մարզիչ), աջից երկրորդը՝ բարերար Վարդ Ալեքսանյանն է (Եգիպտոս)



**Համլետ Առաքեյան.** ծնվել է 1935թ. Երևանում: 1958թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի և առաջնությունների մասնակից է: 1962թ. աղջիկների դպրոցական հավաքական թիմի, 1964թ.՝ տղաների դպրոցական հավաքական թիմի մարզիչ: 1992թ. «Հատիս»

կանանց բասկետբոլի թիմի երկրորդ մարզիչ: 1994-2009թթ. «Գրանդ Տոբակո» ակումբի բասկետբոլի աղջիկների և կանանց թիմերի մարզիչ: 1967թ. ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ: 1969թ. Հ. Առաքելյանին շնորհվել է համամիութենական կարգի մրցավարի կոչում:

Չորրորդ համահայկական խաղերը անցկացվեցին 2007թ.: Մրցանակային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ՝ տղամարդիկ. 1-ին տեղ՝ Սոչի (ՌԴ), 2-րդ տեղ՝ Գլենդել (ԱՄՆ) և 3-րդ տեղ՝ Սիդնեյ (Ավստրալիա): Կանայք. 1-ին տեղ՝ Երևան, 2-րդ տեղ՝ Գլենդել (ԱՄՆ), 3-րդ տեղ՝ Թեհրան (ԻԻՀ):

2009թ. օգոստոսի 9-16-ը Երևանում անցկացվեց Համահայկական խաղերի ծրագրով անցկացվող բասկետբոլի և ֆուտբոլի մրցաշար: Բասկետբոլի մրցաշարում մասնակցեցին տղամարդկանց 16 և կանանց 6 թիմեր: Տղամարդկանց մրցաշարում 72:68 հաշվով հաղթելով Լոս Անջելեսի թիմին՝ առաջին տեղը գրավեցին Սոչիի բասկետբոլիստները (մարզիչ՝ Ա. Վեհապետյան): Երրորդ տեղում էր Թեհրանի թիմը՝ 69:67 հաշվով հաղթելով Երևանի բասկետբոլիստներին: Կանանց մրցաշարում առաջին տեղը գրավեց Թեհրանի թիմը, որը եզրափակիչում 72:66 հաշվով հաղթեց Երևանի մարզուհիներին: Մրցանակային երրորդ տեղը գրավեց Գյումրիի կանանց թիմը (մարզիչ՝ Գ. Վարդանյան):



Համահայկական հինգերորդ խաղերի ծրագիրը, 2011թ.

2011թ. անցկացվեցին Համահայկական հինգերորդ խաղերը, որտեղ տղամարդկանց մրցապայքարում առաջին տեղը զբաղեցրեց Լոս Անջելեսի թիմը: Երկրորդ տեղում էին Սոչիի, իսկ երրորդում՝ Գլենդելի թիմերը: Կանանց առաջնությունում մրցանակային տեղերը բաշխվեցին համապատասխանաբար՝ Թեհրանի, Գլենդելի և Գյումրիի թիմերի միջև:



*Դրվագ Լոս Անջելես–Սոչի եզրափակիչ հանդիպումից*



*Համահայկական հինգերորդ խաղերի չեմպիոն Լոս Անջելեսի տղամարդկանց թիմը, 2011թ.*



*Համահայկական հինգերորդ խաղերի չեմպիոն Թեհրանի կանանց թիմը, 2011թ.*



*Համահայկական հինգերորդ խաղերի երկրորդ մրցանակակիր Գլենդելի աղջիկների թիմը, 2011թ.*



*Մարգարիտա Վարոյան, Մարիամ Պողոսյան, ՀՀ վաստակավոր մարզիչ Գագիկ Վարդանյան, Հերմինե Հակոբյան, Զաբել Շափրանյան*

*Համահայկական հինգերորդ խաղերի երրորդ մրցանակակիր Գյումրիի կանանց թիմը, 2011թ.: Ձախից աջ նստած են՝ Նելլի Սարգսյան, Գոհար Աղամյան, Վարդուհի Մկրտչյան, Լիլիթ Միլիտոսյան: Ձախից աջ կանգնած են՝ Սուսաննա Շահնազարյան, Աստղիկ Սիմոնյան, Մարինե Միքայելյան,*

Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի ավանդույթներից է Համահայկական խաղերի վերջին՝ եզրափակիչ հանդիպումից առաջ կազմակերպել Հայաստանի և Սփյուռքի վետերան բասկետբոլիստների խաղ: Բոլոր խաղերում հաղթող է ճանաչվել Հայաստանի վետերանների թիմը:



*Հայաստանի և Սփյուռքի վետերան բասկետբոլիստները խաղից հետո, 2011թ.*



*«Աղջիկների առաջնության հաղթող թիմը, 2001թ.: Մարգիշ՝ Շ. Սահակյան»*

2004թ. Երևանի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության ամբիոնի կողմից անցկացվել է Հայաստանի պատմության մեջ լավագույն բասկետբոլիստներից մեկի՝ Վիտալի Զաստուլսովի հուշամրցաշարը (միջոցառման կազմակերպիչ՝ Վ. Զաքոյան), որին մասնակցում էին հանրապետության տարբեր քաղաքների պատանի բասկետբոլիստները: Հետագայում մրցաշարն անցկացվում էր Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի հետ համատեղ, որին շուտով մասնակցում էին նաև Իրանի և Վրաստանի պատանի բասկետբոլիստները:



*Վ. Զաստուլսովի առաջին հուշամրցաշարի հուշամեդալները և գավաթները: Երևանի պետական համալսարանի դահլիճ, 2004թ.*



Վ. Ջասուրխովի հուշամրցաշարի հաղթող թիմը, 2005թ.:  
Մարզիչ՝ Շ. Սահակյան



Վ. Ջասուրխովի առաջին հուշամրցաշարի հաղթող թիմը՝ 1988-1989թթ. ծնված պարանիները, 2004թ.: Մարզիչ՝ Մ. Սանթրոսյան

2014թ. մարտին անցկացվեց Ջ. Իսրայելյանին նվիրված միջազգային հուշամրցաշար: Եզրափակիչում Երևանի աղջիկների հավաքականը 61:41 հաշվով հաղթելով Ղազախստանի Ակտաու քաղաքի թիմին՝ զբաղեցրեց առաջին տեղը, իսկ երրորդ տեղը զբաղեցրեց Շիրակի մարզի հավաքականը:



2014թ. Ջ. Իսրայելյանի հուշամրցաշարի հաղթող Հայաստանի և Ղազախստանի աղջիկների հավաքական



Ջ. Իսրայելյանի մրցաշարում լավագույնը ճանաչված 5 բասկետբոլիստուհիները: Ձախից՝ Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի փոխնախագահ Վ. Հարությունյան



Երևանի աղջիկների հավաքական թիմը: Մարզիչներ՝ թիմերը Վ. Հարությունյան, Լ. Բաղդասարյան և Վ. Մանուկյան



2014թ. փետրվարին Հայաստանի 1999-2000թթ. ծնված աղջիկների հավաքական թիմը ուսումնամարզական հավաք և բարեկամական խաղեր անցկացրեց Վրաստանում՝ մրցելով Վրաստանի իրենց հասակակիցների հետ:



*Հայաստանի և Վրաստանի 1999-2000թթ. ծնված աղջիկների հավաքական թիմերը Թբիլիսիում, 2014թ.: Աջից ծախ կանգնած են Ալբերտ Հարությունյանը (մրցավար) և Հայաստանի աղջիկների հավաքականի մարզիչներ Լ. Բաղդասարյանն ու Վ. Հարությունյանը*

Վերջին տարիներին Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի աջակցությամբ (նախագահ՝ Հ. Ռոստոմյան) Վ. Զաստուխովի հուշամրցաշարի հետ միաժամանակ անցկացվում է նաև անվանի բասկետբոլիստուհի Ջենմա Իսրայելյանի հուշամրցաշարը: Ավանդույթ է դարձել մրցաշարերի եզրափակիչ օրն անցկացնել վետերան բասկետբոլիստների խաղ, որին մասնակցում են նրանք, ովքեր խաղացել են Վ. Զաստուխովի հետ նույն ժամանակաշրջանում:



*Վ. Զաստուխովի հուշամրցաշարի մասնակից վետերանների թիմը, 16 մարտի, 2012թ.: Զախից աջ կանգնած են՝ Աշոտ Թուխիկյան, Աղաջանյան Նովենց, Վիկտոր, Գագիկ Վարդանյան, Էդիկ Հարությունյան, Եղիշ Դավթյան, Գարիկ Ճճմարիտյան, Սերժիկ Հարությունյան: Նստած՝ Վլադիմիր Զաքոյան*

*Հայաստանի չեմպիոն «Գրանդ» ակումբի աղջիկների թիմը, 2005թ.: Զախից աջ նստած են՝ Անուշ Առաքելյան, Լիանա Բաղդասարյան, Հռիփսիկ Ադամյան, Ֆլորա Կարապետյան: Զախից աջ կանգնած են՝ Հասմիկ Մամիկոնյան, Կարինե Մարտիրոսյան, Աննա Բաղդոյան, Սաթենիկ Մարտիրոսյան, Տաթևիկ Ալեքսանյան, Գայանե Բաղդասարյան (բժիշկ), Համլետ Առաքելյան (մարզիչ)*



2007թ. Հայաստանի պատանեկան հավաքական թիմը երկու տարիքային խմբով մասնակցեց Եվրոպայի «Բ» խմբի առաջնությանը:



*Հայաստանի 1999-2000թթ. ծնված պատանիների առաջնության հաղթող երկանի «Պոլիփեխնիկ» թիմը, 2012թ.: Մարգիչ՝ Ս.Ստեփանյան*



*Հայաստանի բասկետբոլի մեծահասակների առաջնության հաղթող երկանի «Պոլիփեխնիկ» թիմը, 2008թ.*

Հայաստանում բասկետբոլի զարգացմանը նպաստել է նաև Հ.Մ.Ը.Մ.-ական (Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միություն) խաղերը: Հ.Մ.Ը.Մ.-ական մարզախաղերն ունեն 32 տարվա պատմություն, և 1981-ից տարբեր մարզաձևերում անցկացվել է 9 մրցույթ: Մարզախաղերն անցկացվել են հետևյալ երկրներում՝ Կանադա (Մոնրեալ-Տրոնտո), Արևմտյան Միացյալ Նահանգներ (Լոս Անջելես), Ֆրանսիա (Վալանս), Արևելյան Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն, Նյու Ջերսի), Լիբանան (Բեյրութ), Հունաստան (Աթենք), Հայաստան (Երևան): Կանադայում և Հայաստանում մրցույթն անցկացվել է 2 անգամ: Առաջին իսկ խաղերի ծրագրում ընդգրկված էր բասկետբոլ մարզաձևը: Վերջին երկու Հ.Մ.Մ.Ա.-ական մարզախաղերն անցկացվեցին Հայաստանում՝ 2009թ. օգոստոսի 1-8-ը և 2013թ. հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը: 2013թ. մարզախաղերին մասնակցել են տղաների 16 և աղջիկների 8 թիմեր: Այս մրցումներին առաջին անգամ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ի անվան տակ մասնակցեցին Հայաստանի բասկետբոլի տղաների (մարզիչներ՝ Ե. Դավթյան, Մ. Սանթրոսյան) և աղջիկների թիմերը (մարզիչ՝ Մ. Քեչիշյան): 2013թ. բասկետբոլի մրցումներ անցկացվեցին «Միկա» և «Գրանդ սպորտ» մարզահամալիրներում:



*Հ.Մ.Ը.Մ.-ական խաղերի պատկերանշանը*

Մրցումներում հայտավորված էր տղաների 10 և աղջիկների 8 թիմ: Տղաները բաժանվեցին 2 խմբերի՝ յուրաքանչյուրը 5-ական թիմ: Հայաստանի թիմն ընդգրկվեց «Ա» խմբում, որի կազմում էին Արևմտյան Միացյալ Նահանգները, Հարավային Ամերիկան, Լիբանանը և Ֆրանսիան: Այս խմբում առաջին տեղը գրավեց Արևմտյան Միացյալ Նահանգների թիմը՝ 57:53 հաշվով հաղթելով Հայաստանի Հ.Ա.Ս.Կ. թիմին: Կիսաեզրափակիչ խաղում Արևմտյան Միացյալ Նահանգների թիմը 84:59 հաշվով հաղթեց Կանադայի թիմին և դուրս եկավ եզրափակիչ, իսկ Արևելյան Միացյալ Նահանգների թիմը, 81:74 հաշվով հաղթելով Հայաստանի Հ.Ա.Ս.Կ.-ին, դուրս եկավ եզրափակիչ: Հայաստանի թիմը 3-րդ և 4-րդ տեղերի համար պայքարում 83:70 հաշվով հաղթեց Կանադայի բասկետբոլիստներին և գրավեց 3-րդ պատվավոր տեղը: Արևմտյան Միացյալ Նահանգների թիմը եզրափակիչում 84:68 հաշվով հաղթեց Արևելյան Միացյալ Նահանգների թիմին և զբաղեցրեց առաջին հորիզոնականը:



*Արևմտյան Միացյալ Նահանգների տղամարդկանց թիմը*

Աղջիկները նույնպես բաժանվեցին 2 խմբի. «Ա» խմբում ընդգրկվեցին Արևմտյան Միացյալ Նահանգների, Հ.Մ.Ը.Մ. Հ.Ա.Ս.Կ.-ի, Լիբանանի և Քուվեյթի թիմերը: Հայաստանի թիմը, կիսաեզրափակիչում 74:44 հաշվով հաղթելով Լիբանանի թիմին, դուրս եկավ եզրափակիչ, որտեղ, սակայն, 82:60 հաշվով պարտվելով Արևմտյան Միացյալ Նահանգների թիմին՝ զբաղեցրեց 2-րդ տեղը, իսկ 3-րդ տեղը գրավեց Լիբանանի աղջիկների թիմը:



*Հայաստանի և Լիբանանի աղջիկների հավաքական թիմերը*



*Դրվագներ Հ.Մ.Ը.Մ.-ական մարզական խաղերից*

Տղամարդկանց մրցաշարում լավագույն խաղացող ճանաչվեց Արևմտյան Միացյալ Նահանգների ներկայացուցիչ Ն. Աբրահամյանը, իսկ կանանց մրցաշարում՝ Կ. Սարգիսը:

*Եզրափակիչ խաղից հետո: Արևմտյան Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Հայաստանի Հ.Մ.Ը.Մ. Հ.Ա.Ս.Կ. աղջիկների թիմերը*



**Հրաչյա Ռոստոմյան.** ծնվել է 1981 մարտի 3-ին Երևանում: 1998-2003թ.-ին սովորել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի առամնաբուժական ֆակուլտետում, 2003-2006թթ.՝ նույն համալսարանի կլինիկական օրդինատուրայում ստոմատոլոգ-օրթոպետի մասնագիտությամբ: 2006-2008թթ.-ին դասավանդել է նույն համալսարանում: 2010թթ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: 2006թ.-

ից Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի նախագահն է: 2010թ. Հայաստանի բասկետբոլի հավաքականի անդամ է, հանրապետության բազմակի չեմպիոն, ՀՀ սպորտի վարպետ (2001), միջազգային կարգի մրցավար: 2003թ. ընտրվել է ՀԱՕԿ-ի գլխավոր քարտուղար: Պարզևատրվել է ՀԱՕԿ-ի «Հրանտ Շահինյան», ՀՀ ՊՆ «Անդրանիկ Օզանյան», «Զինվոր Հայրենյաց», Երևանի պետական բժշկական համալսարանի 75-ամյակին նվիրված ոսկե մեդալներով, ՀՀ նախագահի շնորհակալագրով:

Հ. Ռոստոմյանի՝ Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի նախագահ եղած տարիներին հանրապետությունում մեծ ուշադրություն դարձվեց պատանեկան բասկետբոլի զարգացմանը: Պատանի մարզիկները մասնակցեցին Եվրոպայի պաշտոնական և միջազգային մի շարք մրցաշարերի, հանրապետությունում անցկացվեցին պատանիների ու աղջիկների տարբեր տարիքային խմբերի առաջնություններ, երկրորդ անգամ վերականգնվեց «Հատիս» բասկետբոլային ակումբը, իսկ կանանց թիմը 2009 և 2010թթ. մասնակցեց Եվրոգավաթի մրցումներին: Մինչև 16 տարեկան պատանիները 2011թ. մասնակցեցին Եվրոպայի, կանանց հավաքականը՝ Եվրոպայի «C» խմբի առաջնություններին: Որպես միջազգային կարգի մրցավար Հ. Ռոստոմյանը մասնակցել է մի շարք մրցաշարերի: 2012թ. հունիսի 16-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար, աշխատել է մինչև 2013թ. հունիսը:

2009թ. Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի նախագահ Հ. Ռոստոմյանի և «Կոնվերս» բանկի համատեղ ջանքերով «Հատիս» կանանց բասկետբոլային ակումբը նորից ծնունդ առավ և 2009թ. Եվրոգավաթի 2009/10թթ. խաղարկությանը մասնակցելու հայտ ներկայացրեց: Մյունխենում կայացած վիճակահանության արդյունքում «Հատիսը» հայտնվեց բավական ուժեղ խմբում. հայ մարզուհիների մրցակիցներն էին հունական «Աթինաիկոսը», ռուսական «Չևակատան» և թուրքական «Բեշիքթաշը»՝ երեքն էլ Եվրոպական առաջատար բասկետբոլային երկրներից: Գիա Ղազանջյանի գլխավորությամբ հանդես եկող «Հատիս»-ը մեկնարկային հանդիպումն անցկացրեց Աթենքում՝

մրցելով հունական «Աթինաիկոս»-ի հետ, սակայն պարտվեց 54:105 հաշվով: Անհաջող մեկնարկից հետո «Հատիս»-ը կարողացավ իր մեջ ուժ գտնել և երկրորդ տուրում առաջին հաղթանակը տոնեց Երևանում՝ 103:99 հաշվով առավելության հասնելով Վոլոգդայի «Չևակատա»-ի նկատմամբ: Երրորդ տուրը «Հատիս»-ն անցկացրեց Ստամբուլում և 87:64 հաշվով պարտության մատնեց թուրքական «Բեշիքթաշ»-ին: Այն մեծ ոգևորություն առաջացրեց թե՛ մարզիկների, թե՛ մարզասերների շրջանում:



*«Հատիս» կանանց բասկետբոլային թիմը Թուրքիայում՝ «Բեշիքթաշ»-ին հաղթելուց հետո*

Երևանում կայացավ չորրորդ տուրի «Հատիս»-«Աթինաիկոս» խաղը, և հունական թիմը 87:79 հաշվով կրկին պարտության մատնեց «Հատիս»-ին, իսկ 5-րդ տուրում «Հատիս»-ը հանդես եկավ Վոլոգդայում, որտեղ 82:91 հաշվով զիջեց «Չևակատա»-ին:



Վերջին՝ 6-րդ տուրում, «Հատիս»-ը Երևանում հյուրընկալեց «Բեշիքթաշ»-ին: Անհաջողության դեպքում «Հատիս»-ը կարող էր զրկվել «փլեյ-օֆֆի» ուղեգրից: Լարված մրցապայքարում «Հատիս»-ը 78:74 հաշվով հաղթեց շատ կարևոր խաղը, խմբում զբաղեց-

*Ձախից աջ կանգնած են՝ Ն. Ղուկասյան (մարզիչ), Գաննա Ջարիցկա (Ուկրաինա), Իվա Սերդար (Խորվաթիա), Աննա Պոկոյովա (Ուկրաինա), Բոյանա Վուլիչ (թիմի ավագ, Սերբիա), Սաթենիկ Մարտիրոսյան (Հայաստան), Ն. Փոլկարիձե (Վրաստան), Ա. Վալյան (մարզիչ): Ձախից աջ նստած են՝ Գ. Ղազանչյան (ավագ մարզիչ), Տաթևիկ Ալեքսանյան (Հայաստան), Հասմիկ Միքայելյան (Հայաստան), Աննա Բաղդոյան (Հայաստան), Նարինա Աբուլաձե (Վրաստան), Միլիցա Դաբովիչ (Սերբիա), Ադելոյա Օլասունկանմի (Նիգերիա), Ա. Պեպրոսյան (Հայաստան), Տիգրանուհի (թմիչկ)*

րեց 2-րդ հորիզոնականը և նվաճեց 1/16-րդ եզրափակիչի ուղեգիրը: 1/16-րդում «Հատիս»-ը Երևանում հանդիպեց Օրենբուրգի «Նադեժդա»-ի հետ: Ռուսական ակումբը, որը համարված էր Ռուսաստանի հավաքականի մի շարք հայտնի բասկետբոլիստուհիներով, հաղթեց 80-69 հաշվով, իսկ սեփական հարկի տակ առավելության հասավ 80:65 հաշվով: «Հատիս»-ը դուրս մնաց հետագա պայքարից: 2009-10թթ. մրցաշրջանում «Հատիս»-ը հանդես եկավ հետևյալ կազմով՝



*Դրվագներ Եվրոգավաթի 2009-2010թթ. խաղերից*

Հաջորդ՝ 2010թ. մրցաշրջանում ևս «Հատիս»-ը մասնակցեց Եվրոգավաթի մրցումներին: Խմբային փուլում նրա մրցակիցներն էին ռուսական «Դինամո-ԳՈՒՎԴ»-ն և իսրայելական «Ռամլա»-ն, որը հետագայում դարձավ մրցաշարի հաղթողը: «Հատիս»-ը պարտվեց խմբային փուլի բոլոր 4 խաղերում, սակայն նվաճեց «փլեյ-օֆֆ»-ի ուղեգիրը,

քանի որ խաղարկությունում մասնակիցների թիվը համեմատաբար քիչ էր: «ՓԼԵյ-օֆֆ»-ում «Հատիս»-ին պարտության մատնեց Մոսկվայի «Դինամո»-ն (57:62, 63:94): «Հատիս»-ը հանդես եկավ հետևյալ կազմով՝ Սաթենիկ Մարտիրոսյան (Հայաստան), Հասմիկ Միքայելյան (Հայաստան), Գաննա Զարիցկա (Ուկրաինա), Բոյանա Վուլիչ (Սերբիա), Աննա Պոկոյովա (Ուկրաինա), Աննա Բադդոյան (Հայաստան), Քուիաննա Չանչեյ (ԱՄՆ), Կաելա Չափոելայն (Կանադա), Քրիստինե Քեփենեկյան (Հայաստան), Իվա Սերդար (Խորվաթիա), Արինա Մարկոտենկո (Ուկրաինա), Իվանա Պոդրուզ (Խորվաթիա), Էրիկա Դևիս (ԱՄՆ), Մարտինա Զուբակ (Խորվաթիա), Օլիմպիա Սքոթ (ԱՄՆ):

2010թ. հունիսի 28-ից հուլիսի 3-ը Երևանում անցկացվեց Եվրոպայի բասկետբոլի կանանց «C» խմբի առաջնությունը, որին մասնակցում էին Մոլդովայի, Անդորրայի, Հայաստանի, Զիբրալթարի, Շոտլանդիայի, Մալթայի, Ուելսի թիմերը, որոնք բաժանվեցին երկու խմբի: Հայաստանի խմբում հանդես եկան Մոլդովայի, Անդորրայի, Զիբրալթարի թիմերը:



*Բասկետբոլի Եվրոպայի կանանց «C» խմբի առաջնության Հայաստանի հավաքականը, Երևան, 2010թ.: Առաջին շարքում՝ Վ. Խաչատրյան (մարզիչ), Ե. Դավթյան (թիմի պետ), Լ. Բադդասարյան (թիմի ավագ), Ք. Քեփենեկյան, Ի. Գրիգորյան, Հ. Միքայելյան, Մ. Միքայելյան, Հ. Դավաթյան, Գ. Բադդասարյան (բժիշկ), Գ. Ղազանջյան (գլխավոր մարզիչ), երկրորդ շարք ծախից աջ՝ Ա. Բադդոյան, Տ. Ալեքսանյան, Կ. Մարտիրոսյան, Հ. Մամիկոնյան, Ա. Պետրոսյան, Ա. Ամիրխանյան, Ա. Վիրաբյան, Ա. Զեկտոն Միշել*

2011թ. ամռանը մինչև 16 տարեկանների Հայաստանի հավաքականը Մակեդոնիայում մասնակցեց Եվրոպայի «Բ» խմբի առաջնությանը՝ 22 երկրների շարքում գրավելով 6-րդ հորիզոնականը, ինչը մեծ նվաճում էր Հայաստանի համար: Հայաստանի կազմում ասպարեզ դուրս եկան Ռուսաստանում ելույթ ունեցող հայազգի բասկետբոլիստներ, որոնք հանդիպեցին 9 երկրների հավաքական թիմերի հետ:





Կանանց «C» խմբի բաս-կետբոլի Եվրոպայի առաջնության ծրագիրը, Երևան, 2010թ.

Հայաստանի տղամարդկանց բասկետբոլի չեմպիոն Երևանի ճարտարապետության և շինարարության համալսարանի թիմը, 2011թ.: Երկրորդ շարքում ձախից աջ՝ Սևակ Դավոտյան, Եղիշ Դավթյան (մարզիչ), Վ. Առաքելյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Մովսիսյան, Թ. Օրդանյան, Ս. Բաբայան: Առաջին շարքում ձախից աջ՝ Կ. Մելիքյան, Մ. Քեչիշյան, Վ. Նալբանդյան, Մ. Սանթրոսյան (թիմի ավագ), Դ. Սահակյան

Հայաստանի պատանեկան հավաքականը Եվրոպայի 2011թ. «Բ» խմբում իր հանդիպումներում ցուցադրեց հետևյալ արդյունքները՝ Հայաստան-Հունգարիա՝ 58:78, Հայաստան-Սլովակիա՝ 76:52, Հայաստան-Շվեդիա՝ 79:85, Հայաստան-Իռլանդիա՝ 71:59, Հայաստան-Շվեյցարիա՝ 81:63, Հայաստան-Բոսնիա՝ 73:83, Հայաստան-Իսրայել՝ 76:72, Հայաստան-Հոլանդիա՝ 85:71 և Հայաստան-Հունգարիա՝ 52:65:



Դրվագ Հայաստանի պատանեկան հավաքականի Եվրոպայի 2011թ. «Բ» խմբի խաղից



Հայաստանի կանանց առաջնության հաղթող Երևանի «Էրեբունի» թիմը, 2012թ.: Ձախից աջ կանգնած են՝ Շ. Սահակյան (մարզիչ), Է. Եղիազարյան, Ա. Գաբրիելյան, Ա. Պետրոսյան, Ս. Մարտիրոսյան, Ա. Մանուկյան, Թ. Խաչումյան, Հ. Միքայելյան, Լ. Սեդրակյան, Ա. Գազալյան

2014թ. Հայաստանի տղամարդկանց հավաքական թիմը նախապատրաստվում է մասնակցելու Եվրոպայի «C» խմբի առաջնությանը, որը կանցկացվի Երևանում: Նախատեսվում է, որ, բացի Հայաստանի թիմից, կմասնակցեն նաև Անդորրայի, Մոլդովայի, Շոտլանդիայի, Ուելսի, Սան Մարինոյի, Մալթայի և Զիբրալթարի թիմերը: Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան մեծ աշխատանք է կատարել այս առաջնությանը լավագույնս նախապատրաստվելու համար: Հավաքական թիմի գլխավոր մարզիչ է նշանակվել ամերիկահայ Կառլ Բարդաքյանը, ով ամերիկյան համալսարանական բասկետբոլային թիմերի հետ աշխատելու մեծ փորձ ունի, խաղացել և հետագայում մարզել է Համահայկական խաղերի բազմակի չեմպիոն Լուս Անջելեսի տղամարդկանց թիմը: Հավաքական թիմի երկրորդ մարզիչն է Զորիկ Իսաջանը: Հավաքականի կազմում ընդգրկվել են նաև Հայաստանից, Ռուսաստանից, Լիբանանից և այլ երկրներից ազգությամբ հայ բասկետբոլիստներ:



*Հայաստանի տղամարդկանց հավաքական թիմի անդամներն ուսումնամարզական պարապմունքների ժամանակ, 2013թ.: Զախից երկրորդ թիմի գլխավոր մարզիչ Կառլ Բարդաքյանն է:*



*Լեգենդար բասկետբոլիստ Արմենակ Ալաջաջյանը և ԲԿՄԱ-ի թիմում խաղացած տարիներին նրա N 6 մարզաշապիկը*

2014թ. փետրվարի 23-26-ը «Գրանդ Սպորտ» մարզահամալիրում անցկացվեց հանրաճանաչ բասկետբոլիստ, ԽՍՀՄ և Եվրոպայի բոլոր տարիների լավագույն խաղացողներից մեկի՝ Արմենակ Ալաջաջյանի գավաթի մրցաշարը: Այն անցկացվում էր առաջին անգամ, որին մասնակցեցին Թբիլիսիի, Բաթումի, Երևանի, Շիրակի պատանիների հավաքական թիմերը, ինչպես նաև Արցախի պատանի բասկետբոլիստները: Միջազգային այս մրցաշարի եզրափակիչում Թբիլիսիի

պատանիների թիմը, 65:57 հաշվով հաղթելով Երևանի թիմին, նվաճեց Արմենակ Ալաջաջյանի անվան գավաթը, իսկ երրորդ տեղի համար պայքարում Բաթումի պատանիները 74:68 հաշվով հաղթեցին Ստեփանակերտի թիմին և գրավեցին երրորդ մրցանակային տեղը: Այս մրցաշարը մեր պատանի բասկետբոլիստներին կօգնի ձեռք բերել միջազգային խաղերի փորձ և կնպաստի Եվրոպայի առաջնություններում ավելի լավ հանդես գալուն: Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան որոշեց, որ մրցաշարը կդառնա ավանդական:



*Արմենակ անվան գավաթը*      *Ալաջաջյանի մրցաշարի*

*Լեգենդար բասկետբոլիստ Արմենակ Ալաջաջյանի անվան գավաթի մրցաշարի երկրորդ մրցանակակիր Երևանի թիմը, 2014թ.: Չախից առաջինը՝ Վ. Խաչատրյան (մարզիչ) և աջից առաջինը՝ Ա. Վաթյանը (մարզիչ):*



Հայաստանի բասկետբոլի զարգացման գործում մեծ ներդրում ունեն նաև մեր անվանի մրցավարները, որոնք ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ Հայաստանի Հանրապետության անկախությունից հետո կարողացել են բարձր մակարդակով սպասարկել տարբեր նշանակության հանրապետական և միջազգային մրցաշարերը և կազմակերպիչների կողմից խրախուսանքների արժանանալ: Նրանցից կարելի է հիշատակել միջազգային կարգի մրցավարներ Դավիթ Դավթյանին, Աբրահամ Համամջանին, Ժորա Բաղդասարյանին, Հրաչյա Ռոստոմյանին, Մաթևոս Նիկողոսյանին, համամիութենական կարգի մրցավարներ՝ Արշավիր Գաբրիելյանին, Ալիկ Նավասարդյանին, Աբրահամ Համամջանին, Վլադիմիր Հարությունյանին, Խաչատուր Խաչատրյանին, Համլետ Առաքելյանին, Վալերի Իսրայելյանին, Վազգեն

Միրիջանյանին, Վրոյր Ղազարյանին, Վիլիկ Սամվելյանին, Մելիք Պենսիլյանին, Արմեն Հովհաննիսյանին, հանրապետական կարգի մրցավարներ՝ Վլադիմիր Զաքոյանին, Էդիկ Հարությունյանին, Ալբերտ Զենչիրյանին, Անժելա Վարոյանին, Սուսաննա Ենոքյանին և ուրիշներ: Սփյուռքի մեր անվանի մրցավարներից է Արտեմիկ Արաբաջյանը:



**Դավիթ Հովհաննեսի Դավթյան.** ծնվել է 1924

ապրիլի 17-ին Ալեքսանդրիայում (Եգիպտոս): 1948-1952 թվականներին սովորել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում: Խաղացել է «Սպարտակ» մարզական միության բասկետբոլի թիմում: 1950թ. Դ. Դավթյանը զբաղվել է մրցավարությամբ: 1952թ. մարզել է «Սպարտակ» ակումբի տղամարդկանց թիմը, որը համարվում էր հանրապետության ուժեղագույններից մեկը: 1960թ. նրան շնորհվել է համամիութենական կարգի մրցավարի կոչում: 1967թ.

բասկետբոլի միջազգային ֆեդերացիան Վիեննայում Դ. Դավթյանին շնորհել է միջազգային կարգի մրցավարի կոչում: Նա 18 անգամ ընդգրկվել է ԽՍՀՄ 10 լավագույն մրցավարների ցուցակում: ՀՀ վաստակավոր մարզիչ է: Սպասարկել է օլիմպիական խաղեր, աշխարհի, Եվրոպայի ինչպես նաև ԽՍՀՄ և ՀՀ առաջնություններ: 1981թ. Դ. Դավթյանը ընտանիքով տեղափոխվել է ԱՄՆ:



*Եվրոպայի բասկետբոլի առաջնություն, Աթենք, 1970թ.: Միջազգային կարգի մրցավարներ բուլղարահայ Արտեմիկ Արաբաջյանը (ձախից) և Դավիթ Դավթյանը*

**Արտեմիկ Արաբաջյան.** ծնվել է Բուլղարիայում: 1946-1953թթ. խաղացել է Լևսկի «Սլավիա» և «Սպարտակ» ակումբներում: Բուլղարիայի բարձրագույն խմբի առաջնության բազմակի չեմպիոն է: 1967թ. նրան շնորհվել է միջազգային կարգի մրցավարի կոչում: Որպես մրցավար մասնակցել է 1972թ. Մյունխենի և 1976թ. Մոնրեալի օլիմպիական խաղերին, սպասարկել է նաև աշխարհի, Եվրոպայի և միջազգային մի շարք մրցաշարեր:

ՀԱՐԳԵԱ ԸՆԿԵՐ *Բազմաբնույթ*

*Մարտի*

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու բասկետբոլի հանրագեղասկան ֆեդերացիայի հանդիսավոր նիստին, նվիրված հայկական բասկետբոլի զեռնրան, Հայկական ՍՍՀ վասակավոր մարզի, ՍՍՀԲ պատվավոր մրցավար

ԱՆԿՐԱՆԻՎ ԿԱՍԻԼԻ ԳԱՐԲԻՆՅԱՆԻ

ծննդյան 70 և աշխատանքային-հասարակական գործունեության 50-ամյակը:

*Մենք մեր ակնի կաննա 1955 թ. հունիսի 14-ին, մայր 17-ին, 2002 Մի-նիստերի խորհրդի առնիք ֆեդ-կուլտուրայի և սպորտի կոմիտեի նիստի գահինում, Հասցեն՝ Երևան, Արմյան 9.*

ԲԱՍԿԵՏԲՈՒ ՀԱՆՐԱԳԵՏԱՆԻ ՆԵՐԳԱՅԻՆ

1985թ. նշվեց Ա. Գաբրիելյանի ծննդյան 70 և աշխատանքային-հասարակական գործունեության 50-ամյակը (միջոցառման հրավիրապոմսը)



**Ա. Վ. Գաբրիելյան.** ծնվել է 1915թ.: 1965թ. մարզել է Հայաստանի աղջիկների հավաքական թիմը և մասնակցել ԽՍՀՄ դպրոցականների սպարտակիադաների: ՀՀ վաստակավոր մարզիչ: ԽՍՀՄ պատվավոր մրցավար, Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի մրցավարական հանձնաժողովի նախագահ, երկար տարիներ որպես գլխավոր մրցավար սպասարկել է ԽՍՀՄ տարբեր առաջնություններ և մրցաշարեր:



ժ. Բաղդասարյանը մրցման պահին



**Ժ. Բաղդասարյան.** ծնվել է 1940թ. օգոստոսի 16-ին Երևանում: Մրցավարական գործունեությունը սկսել է 1960թ.: 1967-1989թթ. սպասարկել է Խորհրդային միության կանանց և տղամարդկանց բասկետբոլի բարձրագույն խմբի առաջնությունները, ԽՍՀՄ ժողովուրդների 5 սպարտակիադաներ: 1973թ. սպասարկել է

Մոսկվայի համաշխարհային ունիվերսիտետի մրցումները, 1981թ. Դոնի Ռոստովում անցկացված համամիութենական ուսանողական խաղերի բասկետբոլի մրցաշարի գլխավոր մրցավարն էր: Վարել է բազմաթիվ միջազգային հանդիպումներ Կանադայում, Իսլանդիայում, Իրանում, Բուլղարիայում, Չեխոսլովակիայում և ԽՍՀՄ հանրապետություններում: 1971թ. ստացել է համամիութենական կարգի մրցավարի կոչում: 1978թ. շնորհվել է միջազգային կարգի մրցավարի կոչում: 7 անգամ ընդգրկվել է ԽՍՀՄ տարվա լավագույն 20 մրցավարների ցուցակում:



**Արհստակես Նավասարդյան.** ծնվել է 1938թ.

Երևանում: Ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Երկար տարիներ խաղացել է ՀՀ պատանիների և մեծահասակների հավաքական թիմերում: Որպես համամիութենական կարգի մրցավար մասնակցել է ԽՍՀՄ տղամարդկանց, կանանց,

պատանիների, աղջիկների մրցույթների, սպարտակիադանների և միջազգային մի շարք մրցաշարերի: Տարբեր տարիների մարզել է Հայաստանի պատանեկան հավաքական թիմերը: Հայաստանի վաստակավոր մարզիչ է: 2002-2005թթ. Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի նախագահ:



**Դավիթ Գուրգենի Սարգսյան.** ծնվել է 1936թ.

սեպտեմբերի 18-ին Երևանում: 1958թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, մասնակցել է ժողովուրդների 3 սպարտակիադանների (1956, 1959, 1963): 1979-83թթ. աշխատել է Հայաստանի բասկետբոլի հավաքականի հետ: 1970թ. Դ. Սարգսյանին շնորհվել է Հայաստանի վաստակավոր մարզիչի,

իսկ 1979թ.՝ համամիութենական կարգի մրցավարի կոչում:



**Վազգեն Միրիջանյան.** ծնվել է Երևանում: 1963թ.

ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: ՀՀ վաստակավոր մարզիչ է: Խաղացել է Հայաստանի տղամարդկանց հավաքականի կազմում: Մասնակցել է ԽՍՀՄ առաջնությունների: Համամիութենական կարգի մրցավար է: Երկար տարիներ աշխատել է Երևանի Աջափնյակ համայնքի համալիր մարզադպրոցի տնօրեն:



**Սուսաննա Ենոբյան.** ծնվել է 1967թ. փետրվարի


6-ին Երևանում: 1980թ. պատանեկան հավաքական թիմի կազմում մասնակցել է մի շարք համամիութենական մրցաշարերի, ինչպես նաև՝ 1984թ. Տաշքենդում կայացած դպրոցականների համամիութենական սպարտակիադային: 1982թ. որպես բասկետբոլի մրցավար-քարտուղար սպասարկել է հանրապետական առաջնությունները: 1984-1990թթ. որպես տեխնիկական քարտուղար սպասարկել է Հայաստանում կայացած ԽՍՀՄ կանանց առաջնությունների խաղերը: 1990թ. աշխատել է որպես քաղաքային և հանրապետական առաջնությունների գլխավոր քարտուղար: 1995թ. նրան շնորհվել է հանրապետական կարգի մրցավարի կոչում: 1999թ. որպես գլխավոր քարտուղար սպասարկել է բոլոր համահայկական խաղերը: 2009-2010թթ. որպես մրցավար-քարտուղարների պատասխանատու մասնակցել է Երևանում անցկացված կանանց Եվրոգավաթի խաղարկությանը: 2010թ. նշանակվել է Երևան քաղաքում անցկացվող բասկետբոլի Եվրոպայի առաջնության կանանց «C» դիվիզիոնի գլխավոր քարտուղար:

Մենք ունեցել ենք նաև հայ անվանի մարզիչներ, որոնք աշխատելով Հայաստանից դուրս, հասել են մեծ ճանաչման: Նրանցից է Ստեփան Սուրենի Սպանդարյանը:



**Ստեփան Սուրենի Սպանդարյան.** ծնվել է 1906թ.

ապրիլի 2-ին Մոսկվայում: Մահացել է 1987թ. մայիսի 7-ին Մոսկվայում: 1920-ական թվականներից Ս. Սպանդարյանը մեծ ներդրում է ունեցել ԽՍՀՄ-ում բասկետբոլի զարգացման գործում: 1923-1926թթ. խաղացել է Մոսկվայի «ԿԻՄ», իսկ 1927-1940թթ.՝ «Դինամո» ակումբներում: 1937թ. որպես խաղացող և մարզիչ դարձել է Խորհրդային Միության չեմպիոն: 1938թ. ավարտել է Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական պետական ինստիտուտը: 1947թ. Ս. Սպանդարյանը մարզել է ԽՍՀՄ բասկետբոլի ազգային հավաքականը, որն այդ տարի նվաճել է Եվրոպայի չեմպիոնի կոչումը: 1948-1949թթ. նշանակվել է Մոսկվայի «Դինամո»-ի տղամարդկանց, իսկ հետագայում՝ կանանց թիմերի գլխավոր մարզիչ: Ս. Սպանդարյանի գլխավորությամբ Մոսկվայի «Դինամո»-ի տղամարդկանց թիմը դարձել է ԽՍՀՄ չեմպիոն, իսկ կանանց թիմը 1949թ. նվաճել է ԽՍՀՄ գավաթը: 1951-1952թթ. և 1956-1961թթ. մարզել է ԽՍՀՄ բասկետբոլի տղամարդկանց թիմը: Այդ տարիներին Խորհրդային Միության հավաքականը չորս անգամ հաղթել է Եվրոպայի առաջնություններում (1951, 1957, 1959, 1961) և երեք անգամ դարձել է օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր (1952, 1956, 1960): 1965-1966թթ. Ս. Սպանդարյանը մարզել է Չիլիի ազգային հավաքական թիմը: 1943թ. նրան շնորհվել է ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետի, իսկ 1956թ.՝ ԽՍՀՄ վաստակավոր մարզիչի կոչում:



**Ջերի Ջորջի Թարխանյան.** ծնվել է 1930թ. օգոստոսի 8-ին Օհայոյի նահանգի Յուքլիթ քաղաքում:

1956թ. ավարտել է Ֆրեզնոյի (Կալիֆորնիա), 1962թ.-ին՝ Ռեյտլենդսի համալսարանները: 1956-92թթ. որպես մարզիչ աշխատել է Փասադենայի և Լաս Վեգասի համալսարաններում: 1992թ. Սան Անտոնիո ազգային բասկետբոլի ասոցացիայի (NBA) մարզիչ, ամերիկյան քոլեջների չեմպիոն, Լաս Վեգասի համալսարանի բասկետբոլի թիմի մարզիչ: Որպես քոլեջի բասկետբոլի մարզիչ Ջերի Թարխանյանը հաղթել



Է ավելի քան 1000 խաղ՝ ներառյալ 778 (բոլոր ժամանակների 6-րդ լավագույն արդյունքը) կարևոր խաղերում: Նրան անվանել են «Tark the Shark» («Տարկ շնածուկ»): Ջ. Թարխանյանն այժմ թոշակառու է և իր կնոջ հետ բնակվում է Լաս Վեգասում, ունի 4 զավակ և 10 թոռ:

## Հավելված 1

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱԿՈՐ ՄԱՐԶԻՉՆԵՐ

	Ազգանուն Անուն	Քաղաքը
1.	Օզանով Ալեքսանդր	Երևան
2.	Վարդանյան Կոնստանտին	Երևան
3.	Քերովյան Ժորա	Երևան
4.	Խաչատրյան Խաչատուր	Երևան
5.	Խանամիրյան Վարդգես	Երևան
6.	Նավասարդյան Արիստակես	Երևան
7.	Չոլախյան Մարտունիկ	Գյումրի
8.	Փարենուզյան Սանդրո	Երևան
9.	Միրիջանյան Վազգեն	Երևան
10.	Մկրտչյան Սամսոն	Գյումրի
11.	Հարությունյան Էդուարդ	Երևան
12.	Մելիքսեթյան Ռաֆայել	Երևան
13.	Հովհաննիսյան Նինել	Երևան
14.	Բաղդասարյան Ժորա	Երևան
15.	Չախոյան Անդրանիկ	Երևան
16.	Սահակյան Արամայիս	Երևան
17.	Հարությունյան Հարություն	Երևան
18.	Մամիկոնյան Մուշեղ	Երևան
19.	Միսկարյան Լևոն	Երևան
20.	Նահապետյան Համբարձում	Երևան
21.	Առաքելյան Հովհաննես	Գյումրի
22.	Հարությունյան Վաղիմիր	Երևան
23.	Մինասյան Ժիրայր	Երևան
24.	Մուրադյան Օլեգ	Երևան
25.	Միրզոյան Անուշավան	Երևան
26.	Ամիրյան Պետրոս	Երևան
27.	Դավթյան Դավիթ	Երևան
28.	Համամյան Արրահամ	Երևան
29.	Մանուկյան Կառլեն	Երևան
30.	Մարգարյան Ռուդիկ	Երևան
31.	Միմոնյան Կառլեն	Երևան
32.	Առաքելյան Համլետ	Երևան
33.	Մարգարյան Դավիթ	Երևան
34.	Հարությունյան Վոլոդյա	Վանաձոր
35.	Մակարյան Լեոնիկ	Երևան
36.	Սեմերջյան Ժիրայր	Երևան
37.	Չաուչյան Ալեքսանդր	Երևան
38.	Մխիթարյան Սոկրատ	Գյումրի
39.	Նազարյան Արտյուշա	Երևան
40.	Դավթյան Եղիշ	Երևան
41.	Վարդանյան Գագիկ	Գյումրի

ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ՝ Հարություն Դավթյան (Երևան),

ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ՝ Ստեփան Սպանդարյան (Մոսկվա)

## Հավելված 2

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԻ ՄՐՅԱՎԱՐՆԵՐ

	Ազգանուն Անուն	Կարգը
1.	Մելիք-Օսիպով Գեորգի	միջազգային
2.	Դավթյան Դավիթ	միջազգային
3.	Համանջյան Աբրահամ	միջազգային
4.	Բաղդասարյան Ժորա	միջազգային
5.	Նիկողոսյան Մաթևոս	միջազգային

## Հավելված 3

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՄԱՐԶԻՉՆԵՐ

	Ազգանուն Անուն	Կարգը
1.	Մանուկյան Կառլեն	ՀՀ վաստակավոր մարզիչ
2.	Վարդանյան Կոնստանտին	ՀՀ վաստակավոր մարզիչ
3.	Մարգարյան Ռուդիկ	ՀՀ վաստակավոր մարզիչ
4.	Սարգսյան Դավիթ	ՀՀ վաստակավոր մարզիչ
5.	Օզանով Ալեքսանդր	ՀՀ վաստակավոր մարզիչ
6.	Դավթյան Հարություն	ՀՀ վաստակավոր մարզիչ
7.	Համանջյան Աբրահամ	ՀՀ վաստակավոր մարզիչ
8.	Չոլախյան Մարտունիկ	ՀՀ վաստակավոր մարզիչ
9.	Հարությունյան Էդիկ	ՀՀ վաստակավոր մարզիչ
10.	Առաքելյան Համետ	ՀՀ վաստակավոր մարզիչ
11.	Չախոյան Անդրանիկ	ՀՀ վաստակավոր մարզիչ
12.	Դավթյան Եղիշ	ՀՀ. Վաստակավոր մարզիչ

ԽՍՀՄ տղամարդկանց և կանանց հավաքականի մարզիչ Ստեփան Սպանդարյան (Մոսկվա)

## Հավելված 4

### ԽՍՀՄ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

	Ազգանուն Անուն	Մարզածնը
1.	Ալաջաջյան Արմենակ	բասկետբոլ
2.	Մանուկյան Կառլեն	բասկետբոլ
3.	Զաստովսով Վիտալի	բասկետբոլ
4.	Նալբանդյան Զեմմա	բասկետբոլ
5.	Մարգարյան Ռաֆիկ	բասկետբոլ
6.	Ալեքսանդրովա Լյուբա	բասկետբոլ
7.	Սարգսյան Անահիտ	բասկետբոլ
8.	Հակոբյան Անահիտ	բասկետբոլ
9.	Աշոտ Թովսիկյան	բասկետբոլ

### Հավելված 5

ՀԱՅ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԲԱՍԿԵՏԲՈՒԽՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
 ԽԱՍԿ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱՆԵՐԻՆ (1956-1983)

Թիվ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՍՊԱՐՏԱԿԱԴԱՆԵՐ								Քանակը
		1	2	3	4	5	6	7	8	
		1956	1959	1963	1967	1971	1975	1979	1983	
		1	2	3	4	5	6	7	8	9
1	ՀԱՅԿԱԶՅԱՆ Է.	+								1
2	ԱԶԱՐՅԱՆ Ռ.	+								1
3	ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.	+								1
4	ՄԱՆՈՒԿՅԱՆ Կ.	+		#						2
5	ՄԱՐԳԱՐՅԱՆ Ռ.	+	+	+						3
6	ՄՈՒՐԱԴՅԱՆ Թ.	+								1
7	ԾԱՌՈՒԿՅԱՆ Ս.	+	+							2
8	ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ Ա.	+								1
9	ՍԱՐԳՍՅԱՆ Դ.	+	+	+						3
10	ԽԱԶԱՏՐՅԱՆ Խ.	+	+							2
11	ԶԱՐԶՈՂԱՅԱՆ Գ.	+								1
12	ԱԼԱԶԱԶՅԱՆ Ա.	#	#	#	#					4
13	ՇԽԻՆՅԱՆ Վ.		+	#	+					3
14	ՌԱԿՈՎ Ա.		+							1
15	ԴԱՐԲԻՆՅԱՆ Ֆ.		+							1
16	ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ Վ.		+							1
17	ՎԱԹՅԱՆ Է.		+	+						2
18	ԳԱԼՍՏՅԱՆ Օ.		+		+					2
19	ՄԱԿԱՐՅԱՆ Լ.		+							1
20	ԱՂԼԱՄԱԶՅԱՆ ՅՈՒ.			+						1
21	ԳՐԻԳՈՐՅԱՆ Ռ.			+						2
22	ՎԱՐԴԱՆՅԱՆ Կ.			+						1
23	ԿԱՐԱՊԻՇԵՎ Վ.			+						1
24	ՄԱՐԿՈՍՅԱՆ Ա.			+						1
25	ՄԻՐԻՋԱՆՅԱՆ Վ.			+						1
26	ՍԵՄԵՐՋՅԱՆ Ժ.			+						1
27	ՏՈՒՐԿԵՆԻՉ Վ.			+						1
28	ԼԵՄՆՈՅ ՅԱ.			#						1
29	ԴԱԴԱՅԱՆ Ռ.			#		#				2

30	ՂԱԶԱՆՉՅԱՆ Ա.			#	#						2
31	ԶԱՍՏՈՒԽՈՎ Վ.				+	+	+	+			4
32	ՍԱՐԳՍՅԱՆ Տ.				+						1
33	ՎԱՐԴԱՆՅԱՆ Գ.				+	+					2
34	ԹԱՇՉՅԱՆ Ս.				+	+					2
35	ՊԵՏՐՈՒՇԵՎ Ս.				+						1
36	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.				+						1
37	ԱԶԻԶՅԱՆ Ա.				+						1
38	ԿՈՍՏԻՆ Ֆ.				+						1
39	ԴՅԱԶԵՆԿՈ Ն.				+	+	+	+			4
40	ԴՈՒՆՅԱՆ Ա.					+					1
41	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Է.					+	+	+			3
42	ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.					+	+				2
43	ԱՄԻՐԻՍՅԱՆ Հ.					+	+	+			3
44	ԴԱՎԹՅԱՆ Ե.					+	+	+	+		4
45	ԱՂԱՍԱՐՅԱՆ Է.					+	+	#	#		4
46	ՆՇԱՆՅԱՆ Ա.					+	+	+			3
47	ԵՎՏՈՒՇԵՆԿՈ Ա.					+					1
48	ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Մ.						+				1
49	ՈՒՍԿՈՎ Վ.						+				1
50	ՄԻԽԱԹԱՐՅԱՆ Ս.						+				1
51	ԹՈՒԽԻԿՅԱՆ Ա.						+	+			3
52	ԱՎԱԳՅԱՆ Լ.							+			2
53	ՄԻՆԱՍՅԱՆ Ս.							+			1
54	ԳԵՂԱՄՅԱՆ Վ.							+			1
55	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ա.							+	+		2
56	ՆՈՎԵՆՅ Վ.							+	+		2
57	ԱՐՄԵՆԱԿՅԱՆ Ա.								+		1
58	ԾԱՌՈՒԿՅԱՆ Ս.								+		1
59	ԻՈՍԻՖՅԱՆ Ա.								+		1
60	ՍԱՅԱԴՅԱՆ Հ.								+		1
61	ՊԱՊՅԱՆ Ա.								+		1
62	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ս.								+		1
63	ԳԵՈՔՉՅԱՆ Տ.								+		1

# - մասնակցություն այլ հանրապետության հավաքական թիմերի կազմում

### Հավելված 6

ՀԱՅ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԲԱՍԿԵՏԲՈՒԼԻՍՏՈՒՇԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿ-ՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՏՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱՆԵՐԻՆ (1956-1983)

Թիվ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱՆԵՐ								Քանակը
		1	2	3	4	5	6	7	8	
		1956	1959	1963	1967	1971	1975	1979	1983	
1	ԱԿՈՊՈՎԱ Լ.	+								1
2	ՊՈՂՈՍՅԱՆ Օ.	+	+							2
3	ԲՈՒԴԱԴՅԱՆ Ա.	+	+	+	+	+				5
4	ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Զ.	+		+	+					3
5	ԳՐԻԳՈՐՅԱՆ Լ.	+								1
6	ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.	+								1
7	ԴՄԻՏՐԻԵՎԱ Ե.	+	+							2
8	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ա.	+								1
9	ՍՄԻՐՆՈՎԱ Վ.	+								1
10	ՍԱՂԱԹԵԼՅԱՆ Ֆ.	+	+							2
11	ԻՍՐԱՅԵԼՅԱՆ Զ.	+	+							2
12	ԹՈՐՈՍՅԱՆ Ս.	+	+	+						3
13	ԱՎԱՆԵՍՈՎԱ Տ.	#								1
14	ԳՐԻԳՈՐՅԱՆ Գ.	#	#	#	#	+				5
15	ՈՍԿԱՆՅԱՆ Է.		+							1
16	ԴԱՎԹՅԱՆ Ռ.		+							1
17	ՊՈՊՈՎԱ Լ.		+							1
18	ՂԱՐԱԳՅՈՂՅԱՆ Ռ.		+							1
19	ՄՈՒԹԱՖՅԱՆ Ս.		+							1
20	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Օ.			+						1
21	ՈՍԿԱՆՅԱՆ Ի.			+						1
22	ԳՐԻՆՉԵՆԿՈ Լ.			+	+	+	+			4
23	ՔԵՐՈՐՅԱՆ Լ.			+	+	+				3
24	ԼԵՍՆՈՎԱ Լ.			+	+	+	+			4
25	ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Ս.			+						1
26	ԽԱՉԱՏՐՅԱՆ Զ.			+	+	+				3
27	ՍՈԼՆՅԵՎԱ Վ.			+						1
28	ՇՄԱԿՈՎԱ Ա.			+						1
29	ԱՄԻՐՅԱՆ Լ.				#					1
30	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆՈՎԱ Ժ.				#	#				2

31	ԽԱՉԱՏՐՅԱՆ Մ.				+				1
32	ԿՈՐՈՍԿԻՆԱ Տ.				+				1
33	ԼԱԼԱՅԱՆ Մ.				+	+			2
34	ԿԻՐՉԱՆՈՎԱ Լ.				+				1
35	ՄԱՆՍՈՒՐՅԱՆ Մ.				+				1
36	ՊՈՒԳՎՉՈՎԱ Թ.				+				1
37	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Գ.					+			1
38	ԳՐՈՒԽԻՆԱ Է.					+			1
39	ԿԱԼԱԶՅԱՆ Ե.					+	+		2
40	ԼՈՒՍՈՅԱՆ Է.					+	+		2
41	ԽԱՐԱՏՅԱՆ Մ.					+	+		2
42	ՄԱԿԱՐՅԱՆ Ա.					#	#		2
43	ԿՈՄԱՐՈՎԱ Տ.						+		1
44	ԶՈՒՐ Տ.						+	+	2
45	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Լ.						+	+	3
46	ՍԱՐԳՍՅԱՆ Ա.						+	+	2
47	ԴԱՎԹՅԱՆ Կ.						+	+	2
48	ՍԱՅԱԴՅԱՆ Ա.						+		1
49	ԱՎԵՏԻՍՅԱՆ Ն.						+	+	2
50	ՏԿԱՉՈՒԿ Լ.							+	1
51	ՄԱԼՈՒՄՅԱՆ Վ.							+	2
52	ԳՐԻԳՈՐՅԱՆ Վ.							+	1
53	ՍԱՀԱԿՅԱՆ Ի.							+	1
54	ՎՈՐՈՆԵՆԿՈ Լ.							+	1
55	ԿՐԵՍՅԱՆԻԿՈՎԱ Տ.							+	2
56	ՆԻԿՈՂՈՅԱՆ Վ.							+	2
57	ՄԱՏԵՎԱ Տ.							+	1
58	ՉԻՍՏՈՔԱՆԵՎԱ Ե.							#	1
59	ՀԱԿՈՔՅԱՆ Ա.							#	1
60	ԶԱՔԱՐՋՅԱՆ Ա.							#	2
61	ՏՈՐՈՐՈՇՉԵՆԿՈ Ա.							#	2
62	ԼԱՄԶԻՆԱ Օ.								+
63	ԶԻՎԱՐՅԱՆ Մ.								+
64	ՍԵՐԴՅՈՒԿ Ի.								+
65	ԶԻՎԱՐՅԱՆ Ն.								+
66	ՀԱԿՈՔՅԱՆ Ա.								+
67	ՖԱՀՐԱԴՅԱՆ Ռ.								+
68	ՊԱՊԻԿՅԱՆ Զ.								+

# - Մասնակցություն այլ հանրապետության հավաքական թիմերի կազմում

Հայաստանի տղամարդկանց և կանանց հավաքական թիմերը 1956թ.-ից մասնակցում են ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաներին: Գրաված տեղերը ըստ տարիների:

## Հավելված 7

### Կանայք

Սպարտակիադա	1	2	3	4	5	6	7	8
Գրաված տեղը	9	12	12	15	12	14	13	10

### Տղամարդիկ

Սպարտակիադա	1	2	3	4	5	6	7	8
Գրաված տեղը	11	14	16	16	10	12	13	10

### Գրականություն

1. Հ. Մարտիրոսյան, Վ. Զաքոյան, Բասկետբոլը Հայաստանում 1925- 1999թթ. (Տեղեկագիրք), Երևան 1999թ., 70 էջ:
2. Հ. Մելքոնյան, Մարզախաղերի ամբիոնի 60-ամյակ, Երևան, 2005թ., 145 էջ:
3. Ա. Բայրամյան, «Մարզաշխարհի անվանի հայերը», Լոս Անջելես, 2005թ., 529 էջ:
4. Jerry Tarkanian, «Runnin Rebel», Commentary by Bob Knight and Greg Anthony, 2005թ., 220 էջ: Հրատարակվել է ԱՄՆ-ում:
5. Դ. Դավթյան, Չխամրող խաղեր, Լոս Անջելես, 2007թ., 467 էջ:
6. Գ. Ծառուկյան, Վ. Առաքելյան, Մ. Իսախիրյան, Մարզական հանրագիտարան, (երրորդ՝ լրամշակված հրատարակություն), Երևան, 2011թ., 258 էջ:
7. Վ. Աղաբաբյան, Հ.Սահակյան, Մարզական Գյումրին 1920-1993թթ., Գյումրի, 2004թ., 213 էջ:





**Եղիշ Լևոնի Դավթյան.** ծնվել է 1950թ. հունիսի 5-ին: 1966-1970թթ. սովորել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում: 1966-1984թթ. հանդես է եկել Երևանի ՖԻՄԱ-ի կազմում և մասնակցել ԽՍՀՄ «Ա» և բարձրագույն խմբի առաջնություններին: Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների 4 սպարտակիադանների (1971, 1975, 1979, 1983): 1970թ. ԽՍՀՄ սպորտի վարպետ է, Հայաստանի բազմակի չեմպիոն, 1970թ. ԽՍՀՄ ուսանողական խաղերի երրորդ մրցանակակիր, 1973թ. «Բուրեվեստնիկ» ԽՍՀՄ կենտրոնական խորհրդի առաջնության երկրորդ մրցանակակիր, 2004թ. ՀՀ վաստակավոր մարզիչ, 2007թ. ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող, Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի մարզիչական խորհրդի նախագահ: 1985-1989թթ. աշխատել է Ալժիրի Դեմոկրատական Հանրապետությունում որպես ազգային հավաքական թիմի գլխավոր մարզիչ և բարձրագույն խմբի տղամարդկանց մարզիչ: Նրա ղեկավարությամբ թիմը դարձել է Ալժիրի չեմպիոն և գավաթակիր: 1993-2000թթ. աշխատել է Լիբանանում որպես տղամարդկանց և կանանց բարձրագույն խմբի մարզիչ, մարզել է նաև Լիբանանի ազգային հավաքականը: 2000-2001թթ. մարզել է Սիրիայի Հալեպ քաղաքի «Ալ-Ջալախ» ակումբի տղամարդկանց և կանանց թիմերը, 1989-1993թթ.՝ Երևանի «Ուրարտու» տղամարդկանց թիմը, որը մասնակցել է վրոպայի Ռ. Կորաչի գավաթի առաջնությանը: 1970-1997թթ. աշխատել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզախաղերի ամբիոնում որպես դասախոս, իսկ 1989-1993թթ.՝ ամբիոնի վարիչ: 1976-1978թթ. սովորել է Դ. Ֆ. Լեսգաֆտի անվան ֆիզիկուլտուրայի ասպիրանտուրայում, պաշտպանել թեզ, որի համար նրան շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական կոչում: 2013թ. Ե. Դավթյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

**Ե.Լ.Դավթյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**  
1920-2014թթ.

Գիրքը տպագրվել է Հայաստանի բասկետբոլի  
ֆեդերացիայի աջակցությամբ

Չապսը՝ 60x84 1/16, թուղթ օֆսեթ N 1:  
Ծավալ՝ 5.625 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 200



Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:  
ք.Երևան, Պուշկին 40, տարածք 76, հեռ.՝ 010 58-22-99  
E-mail: [info@limush.am](mailto:info@limush.am)